

845

2-24

~~1024~~

3652



84 1/2 1024 10 NOV 1911

u Ժ Օ Ր Ժ Ս Ա Ն

(GEORGE SAND)

ՎԱՐՊԱՊԱՅԻՆ

964

ԱՐԳ

1759
1001

(LE NUAGE ROSE.)

ՄԱՆԿԱԿԱՆ ՎԵՊ.

ԹԱՐԳԱՐ.

Ե. ԼԱԼԱՅԵԱՆՑ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԻԱՆԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԲԵԼԵՆԻ ՓՈՂՈՑ, 5

1882

20 Ն Է

ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԶՈՐԵՂՔՈՐ

ԳՐԻԳՈՐ ԼԱԼԱՅԵԱՆՑԻՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏ

ԹԱՐԳԱՆԻՉՆԷ

Գրիգոր

Дозволено цензурою. Тиф. 15 Апрель 1882 г.

Типог. И. Мартиросянца. Орбелиан. ул., 5

11 2 APR 2013

1790/5
6060



Առաջարկելով մեր ընթերցողներին
երևելի Փրանսուէի հեղինակի այս մանկա-
կան վէպն, աւելորդ ենք համարում երկա-
րօքէն բացատրելու տիկնոջ վէպերի զե-
րազանցութիւնը, շատանում ենք միայն
ևս հայրենակից մի մատենագրի խօսքերն
առաջ բերելով. —

»Ժօրժ Սան'ի (Սմանտին — Լիւսիլ —
օրօր Դիւպէն) վէպերը զուարճալի պատմու-
թիւններ չեն՝ որ կարելի լինի կարդալ Ժա-
մանակ անցկացնելու համար. դժբա արտա-
յայտութիւններ են մի զօրաւոր հոգու, որ
ձգտում է դէպի ճշմարտութիւն. մի հոգու,
որ համաշխարհային է և ծարաւ է հոգե-
կան ազատութեան. դժբա խոստովանու-
թիւններ են մի սրտի, որ փորձել է բոլոր
կրքերն ու տանջանքները, որ միշտ սէր է
որոնում և խաբւում է, շատ շուտ է չուսա-

Հատվում և մեջտ վառվում է նոր չուսով. որ անփոփոխ է իւր մէջ կնոջ սրտի խոր զգացմունքները, և այլ մարդու սրտի զօրութիւնը, որի համար սէրը փիլիսոփայութիւն է, իսկ մարդկութեան ծառայելը — նորա կրօնը:՝

Մի խօսք ևս. այս թարգմանութեան մէջ մի փոփոխութիւն միայն նպատակաշարմար համարեցինք. այն է՝ Փրանսիական շատուկ անուններն, որոնք խորթ կարող են թուիլ Հայ մանկան, փոխեցինք առաւել ծանօթ և ընդհանուր գործածական շատուկ անուանց: Մենք ՚ի նկատի ունեցանք և Փրանսիական ընտելերը և տեղ տեղ աւելի հեթեհեցինք Ֆրանսերէնին քան թէ Ռուսերէնին:

Ե. 1.



ստճոյսի դո զգոփ սխմայ զժ զգոփ իկո
դժմի գարաճ

տաճ զգոփ մեկնորոյս իկո
-տոնար պա ետոյս զժ իտգնորոյս զգո

ՎԱՐԴԱԳՈՅՆ ԱՄՊ

ՄԱՆԿԱԿԱՆ ՎԵՊ.

Ա.

Կատարինէն երեք ոչխար էր պահում: Նա դեռ ևս կարդալ և գրել չգիտէր, բայց լաւ էր խօսում: Նա մի բարի աղջիկ էր, թէ և փոքր ինչ աւելորդ հետաքրքրութիւն ունէր և շուտ շուտ փոխում էր իւր ցանկութիւններն ու ոչ մէկի վերայ հաստատ չէր մնում: Զրօրհնէնքից յետոյ, Կատարինէի երեք ոչխարներն երեք գառն ծնան: Նոցանից երկուսը շատ մեծ էին, իսկ երրորդը սաս-

տիկ փոքր էր, այնպէս փոքր, որ կարծես ճագար լինէր:

Նղիսաբէթ, Կատարինէի մայրը, շատ արհամարանքով էր նայում այս գառնուկին: Նղիսաբէթն ասում էր՝ թէ փոքրիկ գառնուկն ի զուր է ծնուել, որովհետեւ չի մեծանալու, կամ այնպէս վտիտ պիտի լինի, որ իւր կերած խոտին անգամ չի արժենալ:

Այս խօսքերը վշտացնում էին Կատարինէին. նորա կարծիքով ընդհակառակը փոքրիկ գառնուկը միւս երկու մեծերից աւելի գեղեցիկ էր, ուստի և նորան միւսներից առաւել շատ էր սիրում: Նա վճռեց որքան կարելի է լաւ խնամք տանել փոքրիկ գառնուկին և Նղինիկ (բիշտտ) անուանեց նորան, որովհետեւ մաքի էր: Նւ այնպէս հոգս էր տանում Նղինիկի վերայ, որ միքանի անգամ քիչ մնաց նորան սպանի:

Նա անդադար փաղաքշում էր իւր

սիրելուն, ձեռքերի վերայ էր ման ածում և քնեցնում իւր ծնկների վերայ:

Փոքրիկ շնիկները և կատունները սիրում են, որ միշտ իւրեանց հետ խաղան և թոյլ են տալէ՝ իւրեանց փայփայելու, բայց գառնուկներն ընդհակառակն, եթէ լաւ կերակրում ես, աւելի սիրում են, որ իւրեանց հանգիստ թողնեն, որպէս զի երբ կամենան քնեն և մանգան ու պառկեն որտեղ ցանկանան:

Նղիսաբէթն ասում էր իւր աղջկան, որ Նղինիկի մեծանալուն արգելք է լինում անդադար իւր ձեռքերի վերայ կրելով նորան. բայց Կատարինէն ուզում էր, որ Նղինիկն ոչ թէ չմեծանայ, այլ դեռ ևս աւելի փոքրանայ, որ ինքը կարողանայ նորան իւր գրպանում պահել: Նա մեծ ոչխարներին մարգագետին էր տանում երկու ժամ առաւօտեան և երեք ժամ ճաշից յետոյ: Երկու հաստ գառներն անտրտունջ համբերում էին իւրեանց մօր

բացակայութեանը. կարծես նոքա հասկանում էին, որ իւրեանց մայրերը գնացել են դաշտ կաթ բերելու. իսկ Նղնիկը կամ քիչ համբերութիւն ունէր և կամ աւելի քաւած էր լինում քան միւսներն, ուստի և երբ մայրը վերադառնում էր, այնպէս սրտաճմլիկ ձայնով մայրում էր, որ բարեսիրտ Կատարինէն քիչ էր մնում լաց լինի: Կատարինէին արգելուած էր փոքրիկ դառներին մարգագետին տանելու, որովհետեւ նոքա դեռ ևս շատ փոքր էին և դաշտի խոտը նոցա համար դեռ շատ թարմ էր. բայց նա Նղնիկի համար այնքան խնդրեց, որ մայրն ստիպուած ասաց նորան.

— «Ար՛ս ինչպէս կամենում ես, եթէ նա սատակի մի մեծ կորուստ չի լինիլ մեզ համար և ես ուրախ կը լինիմ ազատուելու նորանից, որովհետեւ դու այդ դառնուկի համար խելքդ թուցրել ես և միշտ միայն նորա վերայ ես մտածում:

Դու ոչխարները շատ վաղ ես վերադարձնում և շատ ուշ տանում միայն նորա համար, որ Նղնիկին իւր մօրից չբաժանես: Նորան էլ քեզ հետ տար և խնամիր ինչպէս ցանկանում ես:»

Կատարինէն Նղնիկին իւր հետ դաշտը տարաւ և շարունակ նորան իւր գոգնոցի մէջ էր պահում ցրտից պաշտպանելով: Այսպէս երկու օր լաւ անցաւ, միայն երրորդ օրը նա կենդանուն ծառայելուց ձանձրացաւ և սկսաւ մարգերում առաջուան պէս վազվրգել: Սորանով թէև Նղնիկի վիճակը չվատացաւ, բայց չլաւացաւ էլ:

Մի անգամ Կատարինէն թփերի տակ թռչունների բուն որոնելով, գտաւ մի բնի մէջ երեք փոքրիկ տորդիկներ, արդէն սև փետուրներով ծածկուած: Նոքա աղջկանից չվախեցան և երբ նա ցոյց տուաւ նոցա իւր մատի ծայրը, ձայնը նոցա մօր ձայնին նմանեցնելով, փոքրիկ թռչունները

բացին իւրեանց դեղին բերաններն և ցոյց տուին վարդազոյն կոկորդները: Կատարինէն ուրախութիւնից չգիտէր ինչ անէր: Տուն վերադառնալիս նա ճանապարհին շարունակ խօսում էր նոցա հետ և համբուրում. միայն միւս օրը նկատեց, որ տորդիկների պատճառով մոռացել է իւր ոչխարներին և նոցա գոթադղուլթիւն է պատահել. Եղնիկը փարախում չէր երևում: Կատարինէն նորան մոռացել էր դաշտում. Եղնիկը գիշերը անց էր կացրել դաշտում բաց երկնքի տակ և երեւի նորան գայլը կերել էր: Կատարինէն դառնապէս լալիս էր և անիծում տորդիկներին, որ պատճառ եղան իւր խստասրտութեան և անուշադրութեան: Եղնիկի սէրը դարձեալ արծարծուեցաւ և նա վազեց մարգագետին իմանալու, թէ ինչ էր եղել իւր գառնուկը:

Բ.

Մարտ ամիսն էր, արեգակը դեռ չէր ծագել և մարգագետնում եղած ճահճի վերայ կանգնած էր սպիտակ, թանձր մառախուղ:

Կատարինէն գառնուկին ամէն ծակ ու ծուկերում, փոսերում և բոլոր ցանկապատերի մօտ փնտռելուց յետոյ, մօտեցաւ ճահճին, յուսալով թէ Եղնիկը խրուած կը լինի ճահճի տիղմերի մէջ: Նա երբէք այդպէս վաղ չէր եղած այդ տեղերում, ուստի երբ ճահճին մօտեցաւ, ակամայ կանգ առաւ. — նորան ապշեցուց մի անսովոր երևոյթ. — մառախուղն, որ սփռուցի նման ամբողջ գիշերը ջրի երեսին տարածուած էր, հէնց արեգական առաջին ճառագայթների երևալուն պէս երկու մասը բաժանուեցաւ, և նոցանից կազմուեցան փոքրիկ, փոքրիկ,

բոլորակ ամպիկներ, որոնք աշխատում էին վերև բարձրանալ:

Մի քանիսը այդ ամպիկներից նոճիներուն հանգիպելով արգելուեցան և անշարժ մնացին: Միւսները առաւօտեան զեփիւռից վանուելով և տատանուելով, թափվում էին աւազի վերայ և կարծես խոնաւ բոյսերի վերայ ընկնելով դողդողում էին ցրտից: Մի վայրկեան նոքա Կատարինէի աչքին ոչխարի հօտ երևեցան, բայց նա հօտ չէր փնտռում, այլ իւր Նզնիկին, իսկ Նզնիկն այնտեղ չէր: Կատարինէն գլուխը ծնկների վերայ դրած և երեսը զոգնոցով ծածկած լաց էր լինում, ինչպէս սովորաբար անում են աղջիկներն, երբ նոքա շատ վշտացած են լինում:

Բարեբաղդաբար երեխաներն երկար լաց լինել չեն կարող: Նա վերկացաւ տեսաւ, որ բոլոր սպիտակ ամպիկները ծառերից վերև են բարձրացել և գէպի եր-

կինք են թռչում զեղեցիկ վարդագոյն զնդակների նման, որոնց արեգակը ձգում և տանում էր իւր մօտ, կարծես իւր ճառագայթներով տաքացնել կամենալով նոցա:

Կատարինէն երկար ժամանակ նայում էր, թէ ինչպէս նոքա միմեանցից հեռանում և անյայտանում էին. երբ աչքերը ցած ձգեց իւրեանից բաւական հեռու, տփի մօտ, տեսաւ Նզնիկին անշարժ քնածի կամ մեռածի նման: Կատարինէն մօտ վազեց, անկարելի համարելով նորա մահը. որովհետև երեխաները չեն սիրում առաջուց մտածել այն բաների վերայ, որոնք կարող են իւրեանց մեծ վիշտ պատճառել. նա վեր առաւ Նզնիկը, փաթաթեց զոգնոցի մէջ և շտապեց դէպի տուն: Վազելիս զարմանում էր զոգնոցի թեթեւութեան վերայ, որն այնքան թեթեւ էր, որ կարծես նորա մէջ բան չկար:

— Ինչպէս խեղճ Նզնիկը չարհարուել

և նիհարացել է մի գիշերուան մէջ, մտա-
ծում էր նա: Ինձ թուում է, թէ գոգնոցս
գատարկ է բոլորովին:

Նա գոգնոցը կապեց մէջքից և չէր
համարձակվում բանալ, վախենալով, որ
իւր տաքացրած խղճուկ գառնուկը մըսի:

Յանկարծ փողոցի վերջում տեսաւ
փոքրիկ Նղիային, հարեան Յովհաննիսի
որդուն. երեխան մօտ վազեց ձեռքում
բռնած ինչ էք կարծում, ում.— կենդանի
Նղնիկին, որ մայրւմ էր իւր սովորական
ձայնով:

«Ահա,» ասաց փոքրիկ Նղիան
Կատարինէին, «ահա քո գառնուկը: Նրէկ
նա խառնուել էր իմ ոչխարներին այն
ժամանակ, երբ դու ինձ ցոյց էիր տալիս
տորդիկների բոյնը: Դու չէիր կամենում
ինձ մի տորդիկ ընծայել, իսկ ես ահա
քեզանից աւելի բարի եմ: Նրբ ես տեսայ,
որ քո Նղնիկն իմ ոչխարին իւր մօր տեղն
ընդունելով վազեց նորա ետեւից, ես թողի

նորան կաթն ծծելու: Իսկ այս գիշեր
նորան մեր փարախը տարայ: Այժմ նորան
բերում եմ քեզ, կարծելով, որ դու վշտա-
ցած կը լինիս: Առ ահա, անշուշտ Նղ-
նիկին դու բոլորովին կորած էիր հա-
մարում:»

Կատարինէն այնպէս ուրախ էր, որ
համբուրեց փոքրիկ Նղիային, իւր հետ
տուն տարաւ և նորան ընծայեց երկու
թուչնիկներն, որոնց վերայ Նղիան բո-
լորովին հիացած էր և տուն գնալուս ու-
րախութիւնից այծի պէս թռչկոտում էր:

Միայն այն ժամանակ երբ որ Կա-
տարինէն Նղնիկին մօր մօտ տարաւ,
մտաբերեց, որ գոգնոցի մէջ մի բան էր
կապել:

«Այն ինչ էր որ ես առաւել դրի,»
մտածեց աղջիկը, «ինձ թուում է թէ
ես գառնուկ վերադառնի. հարկաւոր է շու-
տով տեսնել ինչ Կայ գոգնոցիս մէջ
կապած:»

Երկիւղն ու հետաքրքրութիւնը պաշարեցին նորան: Շտապով վազեց փարախի կտուրը, որ մինչև գետին էր իջնում և ամբողջապէս ծածկուած էր մամռով, շատ ծաղիկներով ու հասկերով, որոնց սերմերը քամին էր այնտեղ բերել: Կտուրն անկողնի նման փափուկ էր, որովհետև ծածկուած էր արեգակից չորացած հին յարդով: Շատ անգամ ամառը Կատարինէն այնտեղ մոռանում էր ոչխարներին դաշտը տանելու ժամանակն և քնում էր մի քանի ժամ ևս գիշերուան փոխանակ, որ միշտ նորան շատ կարճ էր թուում:

Նա կտուրի բոլորովին գաղաթը բարձրացաւ և մեծ զգուշութեամբ բացեց իւր գոգնոցը: Որգեօք ինչ կարող էր լինել այդ գոգնոցում:

Գ.

Կատարինէի գոգնոցը բամբակի կապտագոյն կտաւից էր: Նդիսաբէթն այդ գոգնոցը իւր հին շորերիցն էր շինել, ուստի և շատ մաշուած և վատ էր երեւում: Բայց եթէ այդ ըսպէին հազարներ առաջարկէին գոգնոցի փոխանակ, Կատարինէն չէր համաձայնիլ տալու, այնքան հետաքրքրուած էր տեսնելու թէ ինչ կար նորա մէջ: Աերջապէս բաց արաւ գոգնոցը և . . . նորա մէջ սչինչ չկար: Նա մի քանի անգամ ցնցեց գոգնոցը, բայց ոչինչ չընկաւ: Միայն նորա շուրջը թեթեւ սպիտակ մուխ բարձրացաւ, և մէկ ընդունում նորա գլխի վերայ կազմուեցաւ մի փոքրիկ գնդաձև ամպիկ: Սկզբում ամպիկը ձիւնի նման սպիտակ էր, յետոյ ոսկեգոյն դարձաւ, և որքան բարձրանում այնքան սպիտակ - վարդագոյն էր դառնում,

վերջապէս երբ նա բարձրացաւ ընկուզենիների և թանթրուենիների գագաթը, որ փարախի շուրջը բուսնում էին փայլելով արեգակի ճառագայթներից, նա ստացաւ մի ամենագեղեցիկ վարդի գոյն: Կատարինէն շատ չգարմացաւ, որ նա բարձրացաւ և իւր հետ տարաւ ամպը, այլ մտածում էր նորա գեղեցկութեան վերայ և ցաւում որ այնպէս շուտով թռաւ:

«Ո՛հ դու անշնորհք,» աղաղակեց նորա հետեւից մի աղջիկ, «այսպէս ես ինձ վարձատրում որ քեզ թողի երկինք գնալու:»

Եւ հազիւ թէ այս խօսքերը արտասանեց, մի մեղմ շատ մեղմ ու հանդարտ ձայն լսուեցաւ ամպից, որ երգում էր, բայց ինչ էր երգում — անիմանալի էր:

Դ.

Կատարինէն ոչ մի խօսք չհասկացաւ: Նա շարունակում էր նայել ամպին, որ բարձրանալով մեծանում և քանի գնում այնքան բարականում էր, որ վերջապէս բազմաթիւ վարդագոյն ամպիկների բաժանուեցաւ:

— Ա՛յ, ա՛յ, լիմար ամպիկ, աղաղակեց Կատարինէն, դու մօտենում ես արեգակին, որպէս զի նա հալէ քեզ, ինչպէս մի փոքր առաջ հալեց մշուշը մարգագետնում: Աւելի լաւ չէր լինիլ, որ դու պառկէիր իմ գոգնոցում, ես կը պաշտպանէի քեզ և այդ ամենեւին դժուար չէր ինձ համար: Իսկ եթէ դու չէիր ցանկանում պառկել իմ կուրծքիս վերայ, քեզ հով տեղ կը տանէի, — մեր այգին, խնձորենու տակ, կամ առուակի մօտ, ուր լուս-

նում են սպիտակեղէնները, որովհետեւ դու սիրում ես քնել ջրի մօտ: Ես կարող էի քեզ պահպանել: Իսկ այժմ ահա դու թուար և հողմը քեզ մանր կտորների բաժանեց, իսկ արեգակը կը հալէ իւր ճառագայթներով... 2

Այսպէս խօսում էր Կատարինէն ամպի հետ, ականջ դնելով, թէ նա չի պատասխանիլ արդեօք իւրեան: Եւ նորից նա լըսեց երգը, բայց այժմ արդէն մի ձայն չէր երգողն, այլ շատ, նոքա դալճալում էին թուխկատարների պէս, բայց նոցա երգից ոչինչ կարելի չէր հասկանալ: Ձայները քանի գնում մեղմանում էին. վերջապէս Կատարինէն անխելի դառան, և որքան նայում էր, բացի կապույտ և պալծաւ երկնքից, ոչ մի ամպի հետք չէր նշմարում:

— Մայրիկ, ասաց նա Նղիսաբէթին, որ նորան նախաճաշելու էր կանչում, ես ցանկանում եմ մի բան գիտենալ: — Ի՞նչ

են կամենում ասել ամպերը, երբ երգում են:

— Ամպերը չեն երգում, լիմար, նոքա գողգողում և որոտում են երբ կայծակ է խփում:

— Իսկ ես մտքովս անգամ չէի անցկացնում այդ: Ո՛հ երանի թէ իմ Վարդափայլ Ամպին կայծակը չխփէր... 3

— Ի՞նչ վարդագոյն ամպ, ասաց Նղիսաբէթը զարմացած:

— Այն ահա, որ ես այսօր բերի գողնոցիս մէջ փաթաթած:

— Հերիք է, ասաց մայրը, լիմար և անտեղի խօսքեր ես չեմ սիրում: Այդպիսի բաներ երկու տարեկան երեխաները միայն կարող են ասել, իսկ դու արդէն բաւական մեծ ես:

Կատարինէն չհամարձակեցաւ շարունակելու, այլ նախաճաշից լետող գնաց դաշտ: Նա միայն մի թռչնիկ ունէր այժմ, որին առաւ իւր հետ և խաղաց նորանով

մի քանի ժամ, և որովհետեւ այդ օրը վաղ էր վերկացել, ուստի քնեց մարգագետնի վերայ: Որովհետեւ Նդնիկին թողել էր փարախում, ուստի չէր վախենում նորան կորցնելուց: Արթնանալով մէջքի վերայ պառկեց և նայում էր երկնքին, ուր հէնց ուղիղ իւր գլխի վերեւ տեսաւ մի փոքրիկ ամպ, որ բոլորովին միայնակ էր կապտագոյն երկնքի երեսին և փալլում էր ոսկու նման:

— Ա՛խ, նա էլի նոյնպէս գեղեցիկ է. մտածեց Կատարինէն դեռ քնատ: Բայց ի՞նչպէս հեռու է. եթէ երգէ ես չեմ կարող լսել: Նո կը ցանկայի այնտեղ լինիլ, որտեղ նա է, որովհետեւ կը տեսնէի բոլոր երկիրը, և առանց յոգնելու կը շրջէի երկնքում: Եթէ նա ապերախտ չլինէր ինձ կը տանէր այնտեղ բարձր, և ես կը պառկէի նորա վերայ, ինչպէս փափուկ փետուրների վերայ, բոլորովին մօտից կը դիտէի արեգակն և կ'իմանայի թէ ինչից է նա շինած:

Մինչ Կատարինէն այսպէս լուռ ցնորում էր, թփերի մէջ ճնճողւկները ճռռողում էին: Կատարինէն կարծեց, թէ նոքա իւր վերայ ծիծաղում են և ծըլվըլում. «Ա՛խ, ի՞նչ հետաքրքիրն ես, ի՞նչ հետաքրքիրն ես»:

Բայց լանկարծ ճնճողւկները լռեցին և երկիւղից պահուեցան թփերի տակ: Մի մեծ ցին այդ միջոցին թռչում էր երկնքի երեսով հէնց ուղիղ վարդապոյն ամպի տակով:

— Ե՛հ, մտածեց Կատարինէն, նոքա ինչքան կ'ուզեն թող ծիծաղին և ինձ հետաքրքիր անուանեն, բայց այնուամենայնիւ կը ցանկայի նստել այդ թռչնի մէջքի վերայ: Նո կը տեսնէի իմ վարդագոյն ամպս և թերեւ կը հասնէի նորան...

Այդ ժամանակ սթափուելով մտաբերեց, որ հարկաւոր չէ մտածել և խօսել

դատարկ ու չիմար բաների վերայ: Ուստի վեր առաւ իւր իլիկն աշխատելով, որքան կարելի է լաւ մանել ու ոչ մի բանի վերայ չմտածել, բայց երբեմն ակամայ գլուխը վերեւ էր բարձրացնում և երկնքին նայում:

Յինը այլևս երկնքում չէր երևում, իսկ վարդագոյն ամպն առաջուան պէս լողում էր բարձրումը:

— «Ա՛յ, ա՛յ, փոքրիկ Կատարինէ», յանկարծ աղջկայ յետեւից մի ձայն լսուեցաւ, «ինչո՞ւ ես դու երբեմն երբեմն երկնքին նայում:»

Կատարինէն յետ նայեցաւ և տեսաւ իւր մօտ ծերունի Պօղոսին: Նա մերձակայ մացառից ցախ էր կտրատել և շալակած տանում էր տուն: Ծերունին յոգնելով բեռի ծանրութիւնից նստաւ նոճիի տակ Հանգստանալու:

— Նս նայում եմ բարձրում լողացող ամպին, պատասխանեց Կատարինէն: Նս ուզում եմ իմանալ ձեզանից, — դուք շատ

ճանապարհորդել էք և գիտնական մարդ էք, — ինչո՞ւ նա միւսնոյն տեղը մնացել է կանգնած:

— Հը՛մ . . . պատասխանեց ծերունին, երբ մենք նաւով ճանապարհորդում էինք ծովի վերայ, այդ ամպին փոթորկաբեր էինք տնուանում և նորա երևալը վատ նշան էր:

— Ինչի՛ նշան էր նա:

— Մեծ փոթորկի, որդեակ: Երբ նաւաստիները այգալիսի ամպեր են տեսնում ծովում, ասում են. «Դէ՛հ, այս օր մենք շատ աշխատանք պիտի ունենանք, շատ ծանր աշխատանք»: Սկզբում այս ամպը լինում է սպիտակ և մի գառի մեծութեամբ: Այնպէս որ կարծես նորան կարելի է ձեռքով տանել, յետոյ մեծանում, սևանում տարածվում է ամբողջ երկնքի վերայ, այդ ժամանակ զգուշացիր: Կ'սկսի այնպիսի կայծակ, որոտումն, թնդիւն ու քամի, որ կարծես թէ դժոխքն է բա-

ցուել: Այն ժամանակ նայիր թէ ինչպէս
նա խորտակում է նաւի կայմը և ով կա-
րող է թող ազատուի:

— Ա՛խ, Աստուած իմ, գոչեց Կատա-
րինէն վախեցած, միթէ իմ վարդագոյն
ամպն այդպէս բարկացաւ է դառնում:

— Մեր երկիրներում, և այն էլ տա-
րուայ այս եղանակին, այդպիսի փոթոր-
կալից ամպեր շատ հազիւ են պատահում
և իմ կարծիքով ցամաքի վերայ երբէք
չէ կարող մի այդպիսի վտանգ տեղի ու-
նենալ: Սակայն քո վարդագոյն ամպը
շատ տարօրինակ է:

— Ինչո՞ւ է տարօրինակ:

— Ինչո՞ւ է տարօրինակ, կրկնեց Հի-
նաուուրց նաւադնացը, նորա համար է
տարօրինակ, որ տարօրինակ ձև ունի:
Ե՛հ, պէտք է շտապել և գործը վերջացնել
դեռ մութը չկոխած: Ես դեռ երեք
խուրձ ցախ ևս պէտք է տուն տա-
նեմ:

Նա գնաց, իսկ Կատարինէն սկսաւ
կրկին մանել. բայց շարունակ երկնքին էր
նայում, որ շատ դանդաղացնում էր նորա
գործը: Նորան թուում էր, թէ ամպը մեծա-
նում էր և գոյնը փոխում: Նւ չէր սխալ-
վում, ամպը նախ կապտեցաւ, յետոյ քարե-
տախտակի գոյն ստացաւ և վերջապէս սևա-
ցաւ ու այնպէս մեծացաւ, որ երկնքի մի
կողմն անբողջապէս ծածկեց: Բոլոր շրջա-
կայքը սկսաւ մթնել ու խաւարել և յան-
կարծ թնդաց որոտումը: Կատարինէն ա-
ռաջ ուրախանում էր իւր ամպը մեծ և
ուժեղ տեսնելով:

— Վերջապէս, մտածեց նա, ես տես-
նում եմ, որ իմ ամպը միւսների նման
չէ: Արեգակը չկարողացաւ նորան հալել
և դեռ գուցէ նա առաւել շուտով ծածկէ
արեգակի երեսը քան արևը նորան հա-
լէ: — Զարմանքն ինչ է, ես այս առաւօտ
այդ ամպը պահել էի իմ գոգնոցումս:

Կատարինէն դորանով շատ հպար-

տանում էր: Այն ինչ այդ ժամանակ կայ-
ծակները յաճախ այն զարհուրելի ամպի
խիստ մթուժեան մէջ փայլատակում էին:

Աղջիկը վախեցաւ և շտապեց գէպի
տուն քշելու իւր ոչխարները:

— Ես շատ անհանգիստ եի քո մա-
սին, Կատարինէ, ասաց Նդիսաբէթը իւր
աղջկան պատահելիս: Ի՞նչ զարհուրելի
եղանակ է: Ես երբէք չէի տեսել, որ տա-
րուայ այս եղանակին փոթորիկն այսպէս
շուտ հաւաքուէր, և այսպիսի ուժով
թափուէր:

Նւ իրաւ, փոթորիկը զարհուրելի էր,
կարկուտը փշրում էր պատուհանների
ապակիները, հողմը կտուրների վերայից
կղմինդրները պոկում տանում էր: Կայ-
ծակը խփեց այգու ամենամեծ խնձորե-
նուն: Կատարինէն վախեցաւ և կամենում
էր մահճակալի տակ թաղչիլ:

— Չարասիրտ վարդազոյն ամպ, ինքն
իրան բռնել չկարողանալով արտասանեց

նա այս խօսքերը իւր մօր մօտ, եթէ ես
գիտենայի, թէ դու այդպէս խաբեբայ ես,
այն ժամանակ քեզ երբէք զոգնոցիս մէջ
չէի դնիլ:

Նդիսաբէթը սկսաւ յանդիմանել իւր
աղջկան, որ դարձեալ սկսում էր յիմար
յիմար դուրս տալ, բայց Կատարինէն չէր
կարողանում լռել և շարունակում էր իւր
տարօրինակ խօսքերը:

— Ա՛խ, Աստուած իմ, ասում էր
Նդիսաբէթն իւր հարեաններին, իմ աղ-
ջիկս բոլորովին խելագարուել է:

— Է՛հ ոչինչ, ասում էին հարեան-
ները, այդ երկիւղիցն է, վաղը Աստուծով
այդ կ'անցնի:

Ուղիղ որ միւս օրն ամէն բան ան-
ցաւ: Արեգակը իւր բոլոր շքեղութեամբ
սկսաւ փայլել: Կատարինէն էլ արեգակի
նման զուարթ էր, նա բարձրացաւ փա-
րախի կտուրը: Տունը փոթորիկից քայ-
քայուել էր: Բայց որովհետեւ փարախը

ցած էր և քամուց պաշտպանուած, այդ պատճառով, անվնաս էր մնացել:

Անձրեւի պառկեցրած փոքրիկ ծաղիկները, գեղեցիկ դեղնաստուկներն և կաթնբեկներն սկսեցին իւրեանց գլուխները դէպի արեգակը բարձրացնել և կարծես ասում էին նորան. «Վերջապէս դու վերագարձա՞ր, ողջոյն քեզ, մեր բարի հայր, մի հեռանար մեզանից, երբ դու թագընվում ես, երկիւղից մենք չգիտենք ի՞նչ անենք»: Կատարինէն նոյնպէս ցանկանում էր ասել արեւին. «Բարեւ», բայց վախենում էր, թէ արեգակը բարկանայ իւր վերայ այն պատճառաւ, որ նա բաց էր թողել ամպիկն, որի հետ նախընթաց օրն այնպէս կռուել էր: Նա չէր համարձակվում մօրից հարցնելու, (որ այդ միջոցին այդով անցնում էր) թէ կարելի արդեօք բարկացնել և դարձեալ հաշտուիլ արեգական հետ:

Նշխարէթն անմիտ խօսքեր և ցը-

նորքներ չէր սիրում: Կատարինէն էլ նորան լսելով վճռեց այլ ևս այդ ցնորքներին անձնատուր չլինել: Նւ այդ նորան յաջողուեցաւ:

Հետեւեալ երեք օրը տորդիկը շատ էր զբաղեցնում նորան, մինչև որ պանրից շինած լոռ շատ ուտելուց մեռաւ: Կատարինէն շատ տխրեց և սկսաւ ճնճղուկ պահել, բայց նորան էլ կատուն կերաւ: Նոր վիշտ: Նա կենդանիներին թողեց և ցանկանում էր ուսումնարան գնալ: Յետոյ իւր սէրը իլիկի վերայ ձգեց և հետզհետէ զարգանալով դարձաւ մի շատ սիրունիկ աղջիկ և երեւելի մանուկ:

Ե.

Երբ Կատարինէի տասնեակու տարին լրացաւ, մայրն ասաց. «Չես կամենում

արդեօք մի փոքր ճանապարհորդել, աղ-
ջիկս, և նոր երկիրներ տեսնել:

— Ի հարկէ, պատասխանեց Կատա-
րինէն, ես միշտ ցանկանում էի կապտա-
գոյն երկիրները տեսնել:

— Ինչե՞ր ես դուրս տալիս, չիմար,
աշխարհումս կապտագոյն երկիրներ չկան:

— Ո՛չ, կան, — ես ամենայն օր մեր
փարախի կտուրից տեսնում եմ այդ երկըր-
ները. մեր կանաչ երկրի շուրջը էլի մի
մեծ կապտագոյն երկիր կայ:

— Հա՛, հասկանում եմ ինչ ես կա-
մենում ասել. քեզ հեռուից աչքպէս է
երևում, ուրեմն դու կարող ես քո ցան-
կացածին հասնել: Քո մօրաքոյր Մարիամը
մեզանից հեռու սարերի վերայ է բնակ-
վում. դու նորան չես ճանաչում, որով-
հետև արդէն երեսուն տարի է, որ մեզ
մօտ չէ եկել: Սակայն ինքը ցանկանում
է մեզ տեսնել: Նա շատ պառու է և չէ
ամուսնացած, այժմ ապրում է բոլորովին

միայնակ: Նա շատ հարուստ չէ, և դու
չլինի թէ նորանից մի բան խնդրես, ընդ-
հակառակը նորան պէտք է տալ, ինչ որ
միայն ուզէ մեզանից: Ես վախենում եմ,
որ մի գուցէ նա ձանձրութիւնից և ան-
տէրութիւնից մեռնի: Մենք կը զնանք
նորա մօտ և եթէ ինքը ցանկանայ մեզ
հետ ապրել, ես շատ ուրախ կը լինիմ:
Պառաւին ապաստանարան տալն և խնա-
մելը մեր պարտականութիւնն է, Կա-
տարինէ:

Կատարինէն մութ կերպով լիշում էր
իւր ծնողաց խօսածը մօրաքոյր Մարիամի
մասին: Նա երբէք լաւ չէր հասկանում
թէ ինչ էին խօսում նորա մասին և ոչինչ
էլ չէր ցանկանում իմանալու: Բայց այժմ
նոր տեղեր տեսնելու յուսով Կատարինէի
սիրտը սկսաւ թռթռալ: Թէպէտ նա շատ
խոհեմ աղջիկ էր դառել, բայց ճնճղուկ-
ները կատարեալ իրաւունք ունէին նորան
հետաքրքիր համարելու: Եւ չիրաւի աչք-

պիսին էլ էր, բայց դա ամենեւին պակասութիւն չէ, որովհետեւ նա ուզում էր բան սովորել:

Ահաւասիկ նոքա պատրաստուեցան և կառքով մօր հետ ճանապարհ ընկան: Ամբողջ մի օր ու գիշեր գնացին և հասան լեռներին: Նշխարեթն այդ կողմերը տգեղ էր համարում. ուստի Կատարինէն էլ չէր համարձակվում ասելու, որ այդ բոլորը հրաշալի էր երևում իւրեան: Նրբ նոքա կառքից իջան և հարցրին այն գիւղն ուր ապրում էր Մարիամը, նոցա ցոյց տուին մի ճանապարհ, որ փարախի կտուրի նման զառ ի վայր էր և աւելացրին, թէ բացի այդ ճանապարհից ուրիշը չկայ:

— Ահա տարօրինակ ճանապարհ, ասաց Նշխարեթը, այծի ոտքեր պէտք է ունենալ այդ քարափներից անցնելու համար: Ահաւասիկ քո կապտագոյն երկիրդ, Կատարինէ, հաւանում ես:

— Հաւատացէք, որ կապտագոյն է, պատասխանեց Կատարինէն: Մայրիկ, նախըր լերան զառաթին, տեսնում ես ինչպէս կապտագոյն է:

— Այն ձիւն է, որդեակ: Մօտիկից նա բոլորովին սպիտակ է:

— Ամառը ձիւն:

— Այո, որովհետեւ բարձրում այնպէս ցուրտ է, որ ձիւնը չի կարող հալչիլ:

Կատարինէի կարծիքով մայրը սխալվում էր, բայց հակաճառել չէր համարձակվում: Նա սաստիկ ցանկանում էր ճշմարտութիւնը իմանալու և այծեամնի նման մագլցում էր, թէպէտ և չորս ոտն չունէր: Դադրած և ուժաթափ նոքա գիւղը հասան, ուր և տեղեկացան, որ մօրաքոյրն ամառը այնտեղ չէր բնակուում: Սակայն նորա տունը դարձեալ միևնույն ծուխումն էր. Նշխարեթին ցոյց տուին մի տախտակի և մեծ մեծ քարերով ծածկուած կտուրով տուն, որ գտնանվում էր հեռու կա-

նաչ եղևնինների մէջ, և ասացին թէ ընդամենը մի ժամուայ ճանապարհ է մինչև այնտեղ: Եղբսաբէթի համբերութիւնը հատաւ. որչափ եկել էին, դեռ մի այնչափ էլ կտր գնալու, ճանապարհն ևս աւելի զառ ՚ի վայր էր և դժուարեւանելի: Եղբսաբէթը վախենում էր, որ Կատարինէն չի կարողանալ մինչև մօրաքրոջ տունը հասնել: Տեղն այնպէս անապատ ու անճոռնի էր երևում, որ մայրը կամենում էր տուն վերադառնալ, մինչև անգամ առանց իմացնելու պառաւ մօրաքրոջը, թէ ինքը գրեթէ եկել էր նորա տունը: Իսկ Կատարինէն, որ ոչ երկիւղ և ոչ խոնջութիւն էր գգում, իւր մօրը հանդարտեցրեց: Մի փոքր նախաճաշիկ արին և սկսան դարձեալ մագլցելով ճանապարհը շարունակել: Անհնար էր ճանապարհը ընտրել, վասն զի հէնց միայն մի նեղ շաւիղ կար. մինչև անգամ առաջնորդ էլ հարկաւոր չէր: Եւ եթէ լինէր էլ, չէին

կարող խօսել նորա հետ, որովհետև այս կողմի մարդիկը Կատարինէի խօսած լեզուից միայն մի քանի խօսք հազիւ գիտէին, իսկ իւրեանք մի այլ բարբառով էին խօսում, որ ոչ Կատարինէն և ոչ էլ իւր մայրը չէին հասկանում:

Թէպէտ և ճանապարհը վտանգաւոր էր, սակայն նոքա առանց որևէ արկածի հասան խրճթին:

Տունը ծածկուած էր տախտակներով և շրջապատուած փառահէղ եղևնիներով, որոնք ծածկում էին հարթ և թէք հովիտն, որ շրջապատուած էր ոչ թէ խրամներով և պարիսպներով, այլ բարձր ժայռերով: Ժայռի վերայ ձիւն կար, որը կարծես մինչև երկինք էր հասնում. նախ՝ աստիճանաբար ծածկելով սև ժայռերն, ապա սառուցի գեղեցիկ կանաչ — կապտագոյն բիւրեղներով անյայտանում էր ամպերի մէջ:

Այժմ մենք արդէն կապուտ երկրում

ենք գտանվում, մտածում էր Կատարինէն
և եթէ մի փոքր էլ բարձրանանք, մենք
այնտեղ կը լինինք:

Այն րոպէին նորա միտքն ընկաւ մի
վաղուց մոռացած բան. մտածելով թէ
կարելի է երկինք բարձրանալ, նա յի-
շեց իւր վարդապոյն ամպն, որը կար-
ծես մի հին երազի մէջ էր տեսել: Փոքրիկ
Կատարինէն սառուցի փայլից այնպէս
յափշտակուած էր, որ ուշադրութիւն
չդարձրեց մօրաքոյր Մարիամի վրայ, թէ
և շատ ցանկանում էր նորան տեսնել,
և ճանապարհորդութեան ժամանակ շատ
անգամ ինքն իւրեան հարցնում էր. «Ար-
դեօք ինչպիսի կին է մօրաքոյր Մարիամը»:



2.

Մօրաքոյր Մարիամը բարձրահասակ
ու զփզոյն երեսով և արծաթափայլ մա-

գերով մի կին էր, բայց դեռ ևս բաւա-
կան զեղեցիկ:

Նշխարէթին տեսնելով նա չգարմա-
ցաւ...

— Նա սպասում էի, ասաց նա համ-
բուրելով նորան, քեզ և քո զստերդ
տեսայ երազումս. տեսնենք նման է նա
երազումս տեսածին:

Կատարինէն մօտեցաւ և մօրաքոյր
Մարիամը նայեց նորան իւր մոխրագոյն
թափանցիկ աչքերով, որոնք կարծես մինչև
հոգու խորքը թափանցեցին և ասաց.
«Շատ լաւ, շատ լաւ, ես ուրախ եմ, որ
այս երեխան ծնունել է և ապրում է աշ-
խարհիս երեսին»:

Երբ Նշխարէթն և Կատարինէն հան-
գըստացան, մօրաքոյր Մարիամը ցոյց տուաւ
նոցա իւր բնակարանը:

Տունը հեռուից փոքր էր երևում,
բայց մեծ էր և շինուած ամուր փայտից:
Կառուրի վերայ դրուած մեծամեծ քարերը

արգելում էին քամուն շարժելու և պոկելու տախտակները: Տան ներսը չափազանց մաքուր էր, մարդ հիանում էր նայելով նորացրած և փայլուն կահկարասիներին: Թէ սեղանատան և թէ խոհանոցի պղնձի ամանների ամէն տեսակն էլ բազմաթիւ էին. անկողինների փոխանակ բրդով և մազով լցրած արկղներ կային, գեղեցիկ սպիտակ սաւաններով և տաք վերմակներով, որովհետեւ այդ կողմերում երբէք շոգ չէր լինում: Ամբողջ ամառը վառում էին վառարանները և փայտի էլ պակասութիւն չկար: Մարգագետինը շրջապատող ծառերի մեծ մասը Մարիամ մօրաքրոջն էին պատկանում և այս բաւական ընդարձակ մարգագետնի վերայ արածում էին գեղեցիկ կովեր, միքանի այծեր և մի էշ, որ ծառայում էր ճանապարհորդութեան համար:

Նորա մօտ կար նաև մի տղայ, որ կենդանիներին հոգս էր տանում, և մի

մատաղ աղջիկ տնտեսութեան և այս ու այն կողմն ուղարկելու համար:

Մարիամ մօրաքոյրը լաւ ապրելը սիրում էր և շաբաթը երկու անգամ գիւղից միս և հաց էր բերել տալիս:

Մի խօսքով, նա շատ հարուստ էր, այնքան հարուստ, որքան կարող էր լինիլ մի գեղջկուհի:

Եղիսաբէթը բոլորովին այդպէս չէր կարծում և այն մտքով էր եկել, որ նորան օգնէ, եթէ պէտք է, նա զարմացած նայում էր այս բոլորի վերայ և մօրաքրոջ առաջ և այնպէս քաշվում էր, որպէս իւրեանից մի շատ բարձր կնոջ առաջ: Կատարինէն նոյնպէս մի առանձին շփոթութիւն էր զգում, ոչ թէ նորա համար, որ ինքն աւելի աղքատ էր, այլ որ տեսնում էր, թէ մօրաքոյրն աւելի լուսաւորուած էր իւրեանից: Սակայն նորա բարեսրտութիւնը ու իւրեան ցոյց տուած սէրը տեսնելով, հանդարտեցաւ

և սկսաւ նորան սիրել այնպէս, իբրեւ թէ վաղուց ճանաչում էր:

Մօրաքոյր Նետ ծանօթանալու հէնց առաջին օրից, Կատարինէն հարց ու փորձ արաւ և իմացաւ, որ մօրաքոյրը մի կնոջ տան կառավարչուհին է եղել, որ իւր մահից յետոյ նորան մի բան է կտակել:

— Սակայն չկարծես թէ իմ պառաւ տիկինս հարուստ էր, աւելացրեց մօրաքոյր Մարիամը, ես նորա փողերով չէ որ այսպէս հանգիստ ապրում եմ և կեանքի ամէն յարմարութիւններն ունիմ, իմ աշխատանքով ու արհեստովս եմ ձեռք բերել այս բոլորը, ինչ որ տեսնում ես:

— Երևի ձեր գեղեցիկ հօտն, որը դուք լաւ խնամել գիտէք, հալթալթում է ձեզ համար այս բոլորը, ասաց Եղիսաբէթը:

— Իմ հօտս, իրաւ է ինձ ապրուստ է տալիս, պատասխանեց Մարիամը, բայց ինչ փողով գնեցի հող: հօտս կերակրելու

և տեղաւորելու համար: Կարող ես արդեօք գուշակել, փոքրիկ Կատարինէ:

— Ո՛չ, մօրաքոյր, ես չեմ կարող գուշակել:

— Մանել գիտես, աղջիկս:

— Ո՛հ, ի՛նչ ասել կ'ուզէ, մօրաքոյր, եթէ որ ես այս հասակումս չկարողանայի մանել, մի շատ լիմար աղջիկ պիտի լինէի:

— Գիտես դու շատ բարակ մանեի:

— Այո՛, շատ բարակ:

— Մեր մէջ սա առաջին մանողն է, ասաց Եղիսաբէթը հպարտութեամբ, և ինչ որ կամիք կարող էք տալ նորան մանելու, նա ամէնն էլ կարող է:

— Բայց կարող է նա սարգի ոստայն մանել, հարցրեց Մարիամը:

Կատարինէն կարծելով, թէ ծիծաղում է իւր վերայ, ուստի ինքն էլ ծիծաղելով պատասխանեց. «Այդ ես չեմ փորձել»:

— Տեսնեսք դու ինչպէս կը մանես, շարունակեց մօրաքոյրը, տալով նորան մի

փղոսկրեայ ըոք և մի փոքրիկ արծաթապատ իլիկ:

— Ա՛խ, ինչպիսի հրաշալի ըոք է, ինչպիսի իլիկ, բացականչեց Կատարինէն, սաստիկ գրաւուելով ըոքի արուեստական շինուածքով, որ եղեգնի նման ձկուն էր և իլիկը փետուրի թեթևութեամբ:

— Բայց մանելու համար, մօրաքոյր, ըոքին պէտք է մի բան փաթափել:

— Եթէ մի փոքր հնարադէտ լինիս, կը գտնես թէ ինչով կարելի է փաթաթել ըոքը, պատասխանեց մօրաքոյրը:

— Սակայն այնուամենայնիւ ես այստեղ ոչինչ չեմ գտնում, դուք սարգի ուտայնի վերայ էիք խօսում, բայց ձեր տունն այնպէս մաքուր սրբած է, որ մինչև անգամ մի փոշի չկայ:

— Բայց նայիր բալը, Կատարինէ, դու կանգնած ես գրան շէմքի վերայ, չես տեսնում այնտեղ մի բան, որ կարելի լինի ըոքին փաթաթել:

— Ոչ, մօրաքոյր, չեմ տեսնում: Ծառի կեղեւը: Բայց դեռ հարկաւոր է նորան պատրաստել . . . Ոչխարի բոլորդը: Այն ևս հարկաւոր է մաքրել . . .

Ա՛խ, սկսեմ արդեօք մանել այն ամպերն, որ օդնտեղ, բարձրում, երևում են սառույցների վերայ, նոքա շատ նման են բամբակի:

— Ե՛հ ինչ, բեզ ո՞վ ասաց, թէ ամպ մանել չի կարելի:

— Ներեցէք, ես չգիտէի, ասաց Կատարինէն գլուխը ցած ձգելով և ինքն իւրեան յիմարի տեղ դնելով:

Է.

— Միթէ դու չես հասկանում, ասաց Նդիսարէթն, որ մօրաքոյրը բեզ վերայ ծիծաղում է:

— Ամենևին ոչ, Նղիսաբէթ . . . Միթէ զուր չէք իմանում, թէ ինչպէս են կոչում ինձ այս երկրում:

— Չգիտեմ, պատասխանեց Նղիսաբէթը, մենք չենք հասկանում ձեր խօսածն և զուր կարող էք ծիծաղել մեր վերայ ինչքան կամիք:

— Նս բոլորովին չեմ ծիծաղում ձեր վերայ: Կանչեցէք իմ փոքրիկ ծառայ Բենիամինին, որ պարտիզում սեղան է պատրաստում: Նա գիտէ ձեր լեզուն, հարցրէք նորանից, թէ ինձ ինչպէս են անուանում:

Նղիսաբէթը կանչեց Բենիամինին և ուղղակի հարցրեց. «Ի՞նչպէս են կոչում այս կողմերում իմ մօրաքույր Մարիամին»:

— Ի՞նչպէս են կոչում, պատասխանեց Բենիամինը, նորան կոչում են Էրեւելի տէր Ժամար:

Նրբ նա աղախնին էլ հարցրեց նոյնը,

վերջինս էլ առանց տատանուելու, միևնոյնը պատասխանեց:

— Ա՛խ, ի՞նչ զարմանալի բան, ասաց Կատարինէն, զուր ամպ էք մանում: Սիրելի մօրաքույր, զուր այն բանի վերայ էք խօսում, որի մասին ես վաղուց մտածում եմ, միշտ կարծում էի թէ ամպը կարելի է ձեռքով բռնել: Նրբ ես փոքր էի, մի անգամ . . . նա կանգ առաւ, տեսնելով, որ մայրն իւրեան աչքով է անում, կարծես կամենում էր ասել, թէ մի պատմիր քո լիմարութիւնները:

Բայց տիկին Մարիամը կամենում էր բոլորն իմանալ, իսկ Նղիսաբէթն ասաց նորան. «Ներեցէք, մօրաքույր, երեսայ է, դեռ ևս շատ փոքր է: Նա մտքովն էլ չի անցկացնում ծիծաղել ձեր վերայ, ինչպէս զուր ծիծաղեցիք նորա վերայ. զուր իրաւունք ունէիք այդ անելու, բայց նա լաւ գիտէ, որ այդ իրաւունքն ինքը չունի»:

— Սակայն, ընդհատեց պառաւն, այդ ամենեւին ցոյց չէ տալիս, թէ նա ինչ էր կամենում առել:

— Ո՛հ, բարի մօրաքոյր, ասաց Կատարինէն արտասուալից աչքերով, ես երբեք աշխարհումս ոչ ոքի վերայ ինձ թոյլ չեմ տալ ծիծաղելու: Ի գուր մայրիկս ինձ ստախօս է անուանում: Հաւատացէք, մի անգամ երբ դեռ փոքր էի, մի փոքր ամպ վեր առի և դրի գոգնոցիս մէջ:

— Է՛հ, ոչինչ, ասաց մօրաքոյրն առանց բարկանալու, կամ զարմանալու, ինչ արեւը դու նորան, հոգիս, փորձեցիր արդեօք մանելու:

— Ո՛չ, մօրաքոյրս, ես այդ ամպը գոգնոցիցս բաց թողի, որ վարդագոյն գառնալով և երգեր երգելով երկինք թաւաւ:

— Հասկացա՞ր դու ինչ որ նա երբեք էր:

— Եւ ոչ մի բառ, ես այն ժամանակ դեռ շատ փոքր էի:

— Իսկ բարձր թռչելով այդ ամպը մի որոտալից ամպ չգարձաւ արդեօք:

— Այո, այո, մօրաքոյրս, դուք ճշմարիտ էք ասում: Նա մեր տան կտուրը պոկեց և մեր ծաղկած մեծ խնձորենին կոտրեց:

— Ահա թէ ինչ կը նշանակէ ապերախտներին հաւատալ, ասաց տիկին Մարիամը բոլորովին սառնութեամբ: Հարկաւոր է զգուշանալ այն ամէն բանից, ինչ որ փոփոխական է. իսկ ամպն աշխարհիս երեսին ամենից դիւրափոփոխն է, բայց դուք քաղցած կը լինէք. ճաշը պատրաստ է: Օգնեցէք ինձ սպասն ածելու, որ նստենք ճաշելու:

Մի շատ համեղ ճաշ կերան, այնպէս որ Կատարինէն ոչ մի կերակրից էլ չհրաժարուեցաւ: Պանիրն և սերը մանաւանդ շատ համեղ էին: Քաղցրաւենիքն էլ պակաս չէին: Մօրաքոյր ձեռքով պատրաստած մեղրով խմորեղէնը ամենից աւելի

Համեղն էր: Ոչ Նղիսաբէթն և ոչ էլ նորա աղջիկն իւրեանց կեանքում երբէք այսպիսի ճաշ չէին վայելած: Ճաշից յետոյ իրիկնադէմին տիկին Մարիամը լապտերը վառեց և մի փոքրիկ արկղ բերաւ և դրաւ սեղանի վերայ:

— Այստեղ արի, Հոգեակս, ասաց նա Կատարինէին, դու պիտի իմանաս, թէ ինչո՞ւ են ինձ ահա խնայող կոչում: Մօտեցիր Նղիսաբէթ, դու էլ կ'իմանաս թէ ինչպէս եմ ձեռք բերել իմ Հարստութիւնը...

Արդեօք ինչ կար այդ արկղի մէջ, որի բանալին մօրաքոյր Մարիամը բռնել էր ձեռքին: Կատարինէն չափազանց ցանկանում էր այդ իմանալու:

Ը

Արկղի մէջ, որի բանալին մօրաքոյր Մարիամի ձեռին էր, մի սպիտակ, փափուկ, թեթեւ բան կար, որ շատ նման էր ամպի: Կատարինէն զարմանքից աղաղակեց, իսկ Նղիսաբէթը կարծելով թէ մօրաքոյրը կախարդ է կամ մի աստուածուհի, վախից գունաթափուեցաւ: Սակայն այս ամպ չէր, — այս բարակ թելի մի մեծ կծիկ էր, այնպէս բարակ, այնպէս բարակ, որ այդքան բարակ թել ստանալու համար Հարկաւոր էր մի մազը տասը մասն անել:

Այս կծիկն այնպէս սպիտակ էր, որ մարդ չէր ուզում նորան դաչել, այնպէս նուրբ ու բարակ էր, որ մարդ վախէնում էր թեթեւ շունչ անգամ քաշելուց, որ չլինի թէ խճճուի:

— Այս, մօրաքոյր, բացականչեց Կա-

տարինէն բոլորովին հիացած, եթէ այս դուք էք մանեկ, կարելի է ասել, որ աշխարհիս երեսի առաջին մանողն էք, իսկ մնացածները միայն թոկ ուղորդներ են:

— Այս ես եմ մանեկ, պատասխանեց մօրաքոյր Մարիամը, և ամենայն տարինոյնպէս պատրաստում եմ մի քանի այսպիսի արկղիներով մանած: Արդեօք դուք չնկատեցիք ձեր ճանապարհորդութեան ժամանակ, որ մեր կողմերի բոլոր կանայքը ամենանուրբ ասեղնագործներ են բանում, որ շատ արժան է ծախուում: Ես չեմ կարողանում նոցա բոլորի համար ևս թել պատրաստել: Մեր երկրում լաւ մանող կանայք շատ կան, բայց ոչ ոք ինձ չէ հասնում այդ արուեստի մէջ, ուստի և իմ թելին ուրիշներից տասնամարտիկ աւելի են վճարում: որովհետեւ նորանով այնպիսի հիւսուածներ կարելի է գործել, որպիսիքն իմ մահուանից յետոյ ալ ևս

անկարելի կը լինի գործել: Ահա ես շատ պառաւել եմ և շատ ցաւալի կը լինէր, եթէ իմ գաղտնիքն ինձ հետ գերեզման տանէի. ճշմարիտ չէ Կատարինէ:

— Ախ, սիրելի մօրաքոյր, եթէ դուք այդ ինձ սովորացնէիք, փող վաստակելու համար չեմ ասում, այլ այն պատճառով, որ ինձ համար մեծ հպարտութիւն է ձեր արուեստը բանեցնել: Խնդրում եմ, յայտնեցէք ինձ այդ գաղտնիքը:

— Իսկոյն, իսկոյն, ժպտալով ասաց մօրաքոյր Մարիամը: Արդէն ես կէսն ասացի, այն է որ պէտք է ամպ մանել:

Նա ծածկեց արկղը, յետոյ համբուրելով Նիդաբէթին և Կատարինէին, հեռացաւ իւր սենեակը: Մայրն և աղջիկը պառկեցան քնելու այնտեղ, ուր որ էին. այդ սենեակում պատրաստած էր և մի երրորդ անկողին փոքրիկ աղախին Հեղինէի համար:

Որովհետեւ այդ անկողինը Կատարի-

նէի անկողնի մօտ էր, նոքա ամբողջ գիշերը ցած ձայնով խօսակցում էին: Յոգնած Եղիսաբէթը նոցա չէր լսում: Կատարինէն Հազարաւոր Հարցեր էր առաջարկում իւր Հասակակից Հեղինէին: Նորա մտքում միայն մի բան էր պտոյտ գալիս, իմանալ թէ ինչպէս մօրաքոյրն ամպ է մանում:

— Բոլոր գաղտնիքը, պատասխանեց Հեղինէն, նորա ճարպիկութեան և համբերութեան մէջն է:

— Սակայն, մի ամպ բռնել, նորան այնպէս ըոքի վերայ դնել, որ ձեռքի մէջ չհալուի և թել քաշել...

— Դժուարն այդ չէ, բանն ամպ շինել կարողանալն է:

— Ի՞նչպէս թէ ամպ շինել:

— Այո, ամպ շինելն, այսինքն գգելը:

— Ամպ գգել, ինչո՞վ:

— Հեղինէն չպատասխանեց — նա քնեցաւ:

Կատարինէն նոյնպէս փորձեց քնել, բայց այնպէս յուզուած էր, որ քունը չէր տանում: Մոմը հանգաւ և ճրագաւանի մէջ միքանի կայծեր կային միայն: Սակայն Կատարինէն տեսնում էր սենեկի վերին մասնում մի լոյս: Նա գլուխը վերմակի տակից դուրս հանեց և այն սանդուղքի վերեւ, որով մօրաքոյրը գնացել էր, դրան բացուածքից տեսաւ մի լուսոյ նշոյլ: Նա չկարողացաւ համբերել և բոբիկ ոտներով ու զգուշութեամբ բարձրացաւ սանդուղքը:

Սանդուղքը փայտից էր, ուստի Կատարինէն վախենում էր, թէ մի գուցէ իւր քայլերի ձայնը լսուի: Բայց որովհետեւ ինքը շատ թեթեւ էր, ուստի առանց մի ոտնաձայնի հասաւ մինչև սանդուղքի վերջին աստիճանն և դրան ճեղքից ըսկրսաւ դիտել մօրաքրոջ սենեակը:

Ի՞նչ էք կարծում նա այնտեղ ինչ տեսաւ:

Թ.

Նա տեսաւ մի փոքրիկ մաքուր սե-
նեակ, որի մէջ տեղից կախուած էր մի
լապտեր: Ոչ ոք չկար այնտեղ և Կատա-
րինէն շփոթուած Հեռացաւ. նա զգաց,
որ շատ վատ արաւ, ցանկանալով խփըշ-
տակել մի գաղտնիք, որին արժանի չէր:
Նա դարձեալ պառկեցաւ, ինքն իւրեան
յանդիմանելով, որ պատճառ եղաւ վատ
երազների: Արթնանալով վճռեց այլ
ևս այնքան Հետաքրքիր չլինիլ, և սպա-
սել, մինչև որ ինքը, մօրաբայրը, կը
ցանկանար բանալ իւրեան գոյտնիքը:
Հեղինէն նորան տարաւ կովերը կթելու,
յետոյ ի միասին կովերը քշեցին դէպի
մարգագետին, եթէ կարելի է մարգագետին
անուանել լերան անմշակ և խոտով ծած-
կուած էջը: Բայց այսուամենայնիւ սա մի
գեղեցիկ տեղ էր: Սառուցներից հոսող

ցուրտ ու լստակ ջուրը մի ժայռի մօտ
իւր ընթացքից շեղուում և ջրվեժ էր
ձևացնում, արօտատեղիի ծայրին:

Կատարինէն, որ միայն ջրաղացի
ամբարտակի մօտ էր տեսել ջրվեժ, այն-
պէս էր հիանում այս ջրի վերայ, որի
փալից թէ և նորա ուշքերը խողում
էին, սակայն նա չէր դադարում նորա
մէջ փալող հազարաւոր գոհարների վե-
րայ նայելուց: Սկզբում Կատարինէն վա-
խենում էր Հեղինէի նման քարից քար
թռչելով անցնել ջրվեժի վերայից, բայց
յետոյ այնպէս վարժուեցաւ, որ երկու
ժամից յետոյ այդ բանը նորա համար մի
խաղ էր: Նա այժմ կամենում էր մի փոքր
էլ սառնարանի վերայ բարձրանալ. Հե-
ղինէն ցոյց տուաւ նորան, թէ մինչև
ուր կարելի է բարձրանալ առանց խոր-
խորատների հանդիպելու և սովորեցրեց
թէ ինչպէս պէտք է քայլէ, որպէս զի
չսայթաքի: Իրիկնապահին Կատարինէն

արդէն այնքան ընտելացել էր այդ երկրին, որ մինչև անգամ սովորել էր մի քանի բառ տեղական բարբառից: Որովհետև բոլորը նորա համար նոր էր, ուստի նա շատ զուարճացաւ, և այնպէս սիրեց լեռները, որ երբ մայրն ասաց, թէ միւս օրը պիտի վերադառնան, շատ ցաւեցաւ: Մօրաքոյր Մարիամը խիստ բարի և ներողամիտ էր, Կատարինէն նորան լեռներից էլ աւելի սիրեց:

— Եւ ո՛րեմն, աղջիկս, ասաց Նդիսաբէթը, քո ցանկութիւնը կատարելումի հնարք կայ միայն, այն է՝ քեզ պէտք է թողնել այստեղ: Մօրաքոյրդ ցանկանում է, որ դու իւր մօտ մնաս և խոստանում է քեզ էլ սովորեցնել իւր նման բուրդ գգել և մանել, բայց դորա համար հարկաւոր է ժամանակ և մեծ համբերութիւն, իսկ դու չափազանց աշխույժ և թեթեամիտ ես: Այս պատճառով էլ քո այստեղ մնալուդ համաձայնութիւն

ես չտուի: Սակայն եթէ յոյս ունիս, որ կարող ես սովորել մօրաքրոջդ պէս լաւ մանել, ինչպէս արդէն գիտես ինձնից լաւ մանել, ես չեմ կարող արգելել, որ դու մի ժամանակ մօրաքրոջդ նման հարուստ և երջանիկ լինիս: Այդ մասին լաւ մտածելը քո գործն է:

Կատարինէն սիրտը շարժուած մօրը գրկեց և համբուրեց, և երգուեցաւ թէ չէ ցանկանում բաժանուել նորանից. բայց միւս օրն, երբ Նդիսաբէթը ասաց թէ լաւ չէ բաց թողնել օգտակար գործ սովորելու մի այսպիսի բարեպատէհ միջոց, — նա հնազանդուեցաւ:

Մի օրից յետոյ Նդիսաբէթը դարձեալ ասաց նորան. «Մենք հարուստ չենք, քո մեծ քոյրդ երեք որդի ունի, իսկ աւագ եղբայրդ՝ հինգ. ես այրի եմ և ինձ շատ նեղում է այն հոգսը, թէ ծերութիւնս ինչպէս պէտք է անցկացնեմ:

Եթէ դու հարուստ և խելօք լինիս,

բոլոր մեր գերդաստանն էլ ներդրութիւնից կ'ազատես: Կաց այստեղ, Մարիամ մօրաքոյրդ քեզ շատ է սիրում: Նա ներողամիտ կը լինի քո պակասութիւններին, և ինչպէս ես տեսնում եմ, դեռ ևս կ'սկսէ քեզ փայփայել, շարունակեց Նղիսաբէթը: Դու այս կողմերը սիրում ես, երեք ամսից յետոյ ես դարձեալ կը վերադառնամ, և եթէ այն ժամանակ ցանկանաս, քեզ ևս ինձ հետ կը տանեմ, իսկ եթէ ոչ, դարձեալ այստեղ կը մնաս: Ով գիտէ, թերևս մօրաքոյրդ մի ժամանակ իւր բոլոր ունեցածը քեզ թողնէ:

Կատարինէն շատ լալիս էր, երբ մըտածում էր թէ մօրից պիտի բաժանուի:

— Դու էլ ինձ մօտ կ'աց, ասում էր նա մօրը և ես խոստանում եմ հիանալի կերպով սովորել բուրդ զգել և նուրբ մանել:

Սակայն Նղիսաբէթը հիւանդ էր հայրենեաց կարօտով:

— Ո՛չ, պատասխանեց նա, եթէ ես

այստեղ մնամ, կամ կը մեռնիմ և կամ կը խեղագարուիմ: Քեզ ու քեզ մէկ մտածիր, կամենում ես, որ այդպէս լինի: Միւս կողմից իրաւունք ունիս արդեօք մեզ օգտակար չլինել քանի որ կարող ես . . .

Կատարինէն հեծկլտալով գնաց քընելու և խոստացաւ մօրը, բոլոր նորա խորհուրդները կատարելու: Միւս օրը Հեղինէն Կատարինէին չարթնացրեց և մինչև ժամը իննը քնեցաւ: Արթնանալով իւր անկողնու մօտ տեսաւ մօրաքոյր Մարիամին, որ համբուրելով և զրկելով նորան ասաց.

— «Սիրելի Կատարինէ, քաջասիրտ և խելօք եղիր, մայրդ այս առաւօտ կանուխ ճանապարհ ընկաւ: Նա քնած ժամանակդ համբուրեց քեզ բոլոր սրտով և խնդրեց ինձ ասելու, որ երեք ամսից յետոյ դարձեալ կը վերադառնայ: Մայրդ չկամեցաւ անխնայնել քեզ, որովհետև սիրտդ շատ

կը մորմոքէր նորա հեռանալը տեսնելով:
Որովհետեւ Կատարինէն դարձեալ իւր
լացը չէր կարողանում բռնել, ներողու-
թիւն խնդրեց մօրաքոյր Մարիամից իւր
տրտմելու համար: Իսկ մօրաքոյր Մա-
րիամը ասաց. «Ընդհակառակն ոչինչ վատ
բան չկայ, որ դու մօրդ հեռանալու վե-
րայ վշտանում ես, այդպէս էլ պէտք է,
և դու վատ աղջիկ կը լինէիր եթէ չափսո-
սայիր նորա հեռանալու մասին, բայց ես
քո օգտիդ համար, խնդրում եմ, որդեակ
իմ, որքան կարելի է առաւել քաջասիրտ
եղիր և խոստանում եմ ոչինչ չխնայելու,
որ երջանիկ լինինք ՚ի միասին: Դու պէտք
է մտածես նաև, որ քո մօր համար ա-
ւելի ծանր էր քեզանից բաժանուիլն և
միայն մի բան կարող է նորան մխիթա-
րել, այն է, որ դու սիրով հնազանդուե-
ցար նորա կամքին:

Կատարինէն իւր բոլոր ճիգը դրաւ
զգացմունքներին յաղթելու համար, յետոյ

համբուրելով մօրաքրոջը խոստացաւ, որ-
քան կարելի է լաւ աշխատել:

— Այս օր, պատասխանեց մօրաքոյրը,
դու գնա՛ զբօսնելու և տրտմութիւնդ փա-
րատելու, իսկ վաղը մենք գործը կ'սկսենք:

Ժ.

Եւ յիրաւի, միւս օրը Կատարինէն
առաջի դասն առաւ, բայց իւր սպասածն
այդ չէր: Դեռ ոչ մի զաղտնիք բացուած
չէր նորան: Մօրաքոյրը մի բոք տուաւ
բուրդով պատած և ասաց. «Աշխատիր որ-
քան կարելի է բարակ թել մանել»:

Առաջին անգամի համար, այսքան
շատ բաւական էր, որովհետեւ իւր հայ-
րենիքում կանեփից միայն հաստ պատ-
տառի թել էին մանում: Կատարինէն
գործին եռանդով կալաւ և մանածը վատ

չէր, բայց դեռ շատ հեռու էր իւր ցանկացածի նման մանելուց, այս պատճառով վախենում էր մանածը մօրաքրոջը ցոյց տալու: Կատարինէն յանդիմանութիւն ստանալու էր սպասում, բայց մօրաքոյրն ընդհակառակը գովեց նորան ասելով, որ առաջին անգամուայ համար այդ շատ լաւ է, իսկ վաղն աւելի լաւ կը լինի: Կատարինէն խնդրեց, որ ամբողջ օրն ինքը տանը մնայ, տեսնելու համար թէ մօրաքոյրն ինչպէս է մանում:

— Ո՛չ, պատասխանեց մօրաքոյրն, ես չեմ կարող աշխատել երբ ինձ են նայում: Այդ պատճառով միշտ իմ սենեակումն եմ աշխատում, իսկ քո հասակակիցները չեն կարող ամբողջ օրը տանը վաղուած նըստել: Դու կարող ես աշխատել ինչպէս կամենաս, կամ զբօսնելով և կամ իմ կովերը արածացնելով: Եւ քեզ երբէք չեմ ստիպիլ մի օր և է բան անելու, որովհետեւ տեսնում եմ, որ դու ծով չես, այլ

աշխատում ես միշտ գործել ինչքան կարող ես:

ձիշտն ասած, Կատարինէն ամենեւին ծով չէր, սակայն անհամբեր էր, իսկ այդ յատկութեամբ չէր կարող միայնակ սովորել մի այդպիսի մեծ գաղտնիք, որն իբրեւ մի բաժակ շաքարախառն կաթ, նա կամենում էր մի անգամից խմել: Ամենայն օր նա մի փոքրիկ յառաջադիմութիւն էր անում, ամէն երեկոյ մօրաքրոջը ցոյց էր տալիս իւր իլիկն, առաջի օրուանից առաւել բարակ թելով փաթաթուած, բայց ինքն իւր այդ յառաջադիմութիւնը չէր նկատում: Մի շաբաթից յետոյ, սկսաւ նա ձանձրանալ ու կշտացաւ մօրաքրոջից: Նորա քաջալերութիւնները համբերութիւնից հանում էին Կատարինէին: Մինչև անգամ խոնարհ ու զուարճասէր Հեղինէն նորան զայրացնում էր իւր հանգարտութեամբ:

Հեղինէի պարտականութիւնն էր հոգ

տանել Հօտին և կաթնեղէնի պատրաս-
տութեան և ուրիշ ոչ մի գործ չունէր։
Բենիամինը երբէք տանը չէր մնում, նա
միշտ անտառումն էր բնակւում։ Իսկ
եթէ տուն էր դառնում, այն ժամանակ
սիրում էր գնալ որսորդութեան իւր շան
ընկերակցութեամբ, բացի որից նա ոչ ոքի
ընկերութիւնը չէր սիրում։

Կատարինէն յաճախ միայնակ էր մը-
նում. մօրաքրոջը մի միայն ուտելու ժա-
մանակ էր տեսնում. իրիկունը վաղ մօ-
րաքոյրն իւր սենեակն էր առանձնանում
աշխատելու համար։ Իսկ Հեղինէն հէնց
որ գլուխը բարձին զնում էր թէ չէ, սկսում
էր խռմովալ։

Կատարինէն երազում ցնորում էր
և երբեմն էլ լաց էր լինում։ Ինքն իւ-
րեան առում էր թէ այն եղանակով, որով
Մարիամը նորան սովորեցնում էր, դեռ
ևս մօրաքրոջ պէս մանեւ չսովորած, իւր
մազերն էլ նորանին պէս պիտի սպիտա-

կին։ Երբ մօրը լիշում էր, սկսում էր վա-
խենալ, նորա լանդիմանութիւնից, երբ
երեք ամսից լետոյ գալով մայրը պիտի
տեսնէր, թէ ինքն ոչ մի յառաջադիմու-
թիւն չէ արել։

Մի առաւօտ Կատարինէն շատ վաղ
դուրս եկաւ տնից. նա վճռեց այդ օրն
այնպէս լաւ մանել, որ մօրաքոյրը վեր-
ջապէս բանար նորան իւր գաղտնիքը։
Վեր առաւ իլիկն և նստաւ ժայռերի
մէջ, որպէս զի ոչ մի կողմը չնայէ և
ուշադրութիւնը չցրուի։ Բայց կարօղ է
արդեօք մարդ այդպէս մնալ։ Նա ակամայ
բարձրացրեց աչքերն և տեսաւ իւր գլխի
վերեւի սառնարանն և լերան բաց դա-
գաթը։ Մինչև այժմ Կատարինէն չէր
տեսել գագաթը, որովհետեւ նա միշտ
ծածկուած էր լինում մշուշով։ Երկինքը
չափազանց պարզ էր։ Կատարինէն սաս-
տիկ յափշտակուեցաւ տեսնելով լեռների
վերայի սպիտակափալ ձիւնը, որ զարդա-

րում էր կապտագոյն երկինքն և կամե-
ցաւ զնալ մինչև այնտեղ, բայց այդ շատ
վտանգաւոր էր: Հեղինէն այդ մասին նո-
րան նախազգուշացրել էր, իսկ մօրաքոյրն
արգելել էր մինչև անգամ փորձելն, ասե-
լով, որ միայն տղաները կարող են այն-
տեղ բարձրանալ: Կատարինէն բաւականացաւ միայն
անդադար հառաչելով այս սպիտակ գա-
զալծներին նայելով, որոնք այնքան մօտ
էին երևում, որ նա կամենում էր ձեռ-
քով շօշափել, մինչ դեռ ինքն ըստ ին-
քեան շատ չհեռու էին: Այն ժամանակ
նա տեսաւ այն, որ սկզբում երբէք չէր
տեսել այս կողմերում: Փոքրիկ ոսկէգոյն
ամպերի կոյտերն անդամանդէ մանեակի
նման շրջապատում էին ամենաբարձր
գագաթը: Ի՛նչպէս գեղեցիկ է, ասաց նա, և
ի՛նչքան ես կը ցանկայի մի այնպիսի բա-
րակ թել մանել, որի վերայ կարելի լինէր

այդ մանր մարգարիտները շարել: Այսպէս
մտածելիս նա տեսաւ լերան ամենաբարձր
գագաթին մի փոքրիկ, բայց փայլուն ու
գեղեցիկ կարմիր կէտ, որ խաղում էր արե-
գակի ճառագայթների տակ, փոքրիկ ամ-
պի մանեակների վերևը: Այս ի՛նչ կարող
էր լինիլ. ծաղիկ, թռչնիկ թէ աստղիկ:

ԺԱ.

Այժմ թէ ես ունենայի մօրաքրոջս
արծաթի ականոցները, ճշտութեամբ կ'որո-
շէի թէ ինչ բան է այն, որովհետեւ ես
ինձ ասաց, թէ այդ ականոցներով կարելի
է տեսնել ամենայն ինչ, որ չի կարելի
տեսնել հասարակ աչքով: Սակայն ըստի-
պուեցաւ միայն իւր աչքերով շատանալ:
Շարունակ նայելով նա տեսաւ, որ փոքրիկ
կարմրագոյն կէտը դէպի ինքն էր ձգում
ոսկէգոյն ամպերն, որոնք շրջապատեցին

և ծածկեցին նորան մինչև որ բուրդովին անյայտացաւ այդ կէտը: Բուրդ այս փոքրիկ միացած ամպերի կտորները կազմեցին մի մեծ ամպ, որ ոսկի գնդակի նման պտոյտ էր գալիս ամենաբարձր լեւրան գազաթի վերայ և փայլում էր ինչպէս աքաղաղը զանգակատան գլխին: Մի րոպէից յետոյ, այս գնդակը բարձրացաւ ու թռաւ, քանի որ նա թռչում էր, այնքան էլ աւելի փոքրանում էր. վերջապէս վարդի գոյն ստացաւ և այն ժամանակ Կատարինէի ականջին հասաւ նորա երգի ձայնը, որ բիւրեղի նման մաքուր էր և աշխարհիս ամէն երգերից գեղեցիկ:

— Բարև Կատարինէ, ճանաչում ես դու ինձ:

— Այո՛, այո՛, ես քեզ ճանաչում եմ, ես դրել եմ քեզ իմ գոգնոցիս մէջ: Դու իմ փոքրիկ բարեկամն ես, այն վարդագոյն ամպիկն, որ խօսել գիտէ, որի հետ ես այժմ խօսում եմ և որի խօսքերը լսում

եմ: Իմ թանկագին ամպիկ, դու երբեմն երբեմն չիմարանում ես, դու իմ գեղեցիկ ծաղկած խնձորենին կոտրատեցիր, բայց ես ներում եմ քեզ: Դու շատ գեղեցիկ վարդի գոյն ունիս և ես քեզ շատ եմ սիրում:

— Այ, Կատարինէ, պատասխանեց ամպը, բո՛ խնձորենին ես չկոտրեցի, այլ փոթորիկն, այն չարագործն, որ բնակվում է իմ սրտիս մէջ և ստիպում է ինձ չարանալու: Բայց նայիր, ես ինչպէս հեզ և հանդարտ եմ, երբ դու ինձ նայում ես քաղցրութեամբ: Ինչո՞ւ դու մի անգամ սառնարանի գազաթը չես գալիս: Այնտեղ բարձրանալն այնպէս դժուարին չէ, ինչպէս քեզ հաւատացրել են, մինչև անգամ շատ հեշտ է, եթէ միայն կամենաս: Բացի դորանից ես այնտեղ կը լինիմ, եթէ դու վայր կ'ընկնես, իմ վերայ կ'ընկնես և ես քեզ կը պահպանեմ, որ չվնասուիս: Նկատիր, Կատարինէ, եկ հէնց լուսաբացին:

ես ամբողջ գիշերը քեզ կը սպասեմ և եթէ դու չգաս, այնպէս կը վշտանամ, որ տաք տաք արտասուքների մէջ կը թաղուիմ և վաղը ամբողջ օրն անձրև կը գայ:

— Կը գամ, ասաց Կատարինէն, անպատճառ կը գամ և հազիւ թէ արտասանեց այս խօսքերը, յանկարծ լսեց մի թնդանօթի թնդիւն, որին հետևեց մի մետաղի փայլ: Նա այնպէս վախեցաւ, որ սկսաւ փախչիլ, կարծելով թէ նենգաւոր ամպը դարձեալ դաւաճանում է իւրեան, բարութեանը չարութիւն փոխարինելով: Երբ նա բոլորովին շփոթուած դէպի տուն էր վազում, յանկարծ պատահեցաւ Բենիամինին, որն իւր շան հետ միասին հանդարտ գնում էր:

— Միթէ դո՞ւ էիր, հարցրեց Կատարինէն նորան, որ այդ ձայնը արձակեցիր քո հրացանով:

— «Այդ թնդիւնը որն որ լսուեցաւ,

պատասխանեց Բենիամինը ծիծաղելով, — ո՛չ. այն իմ հրացանի ձայնը չէր և ոչ էլ որոտման, այլ ձեան հիւսն էր այն ձայն հանողը: — Ի՛նչ ես կամենում ասել, ի՛նչ բան է ձեան հիւսը:

— Ձեան հիւսն արեգակից հալուած սառուցի կտորն է, որ սարից սար է գլորվում, տանելով իւր հետ ճանապարհին պատահածը, քարեր, երբեմն էլ ծառեր, հող և պատահմամբ հանդիպած մարդիկ: Միայն այսպիսի անբաղդութիւններ շատ հազիւ են պատահում: Դու այդ երևոյթին պիտի ընտելանաս, որ լեռների մէջ շատ սովորական բան է: Այժմ գեղեցիկ եղանակներին ամենայն օր և գուցէ ամենայն ժամ կը տեսնենք այդ երևոյթը:

— Ես կ'ընտելանամ դորան, բայց, Բենիամին, քանի այստեղ ես, խնդրեմ մի ասա, կարո՞ղ ես սառնարանի ամենաբարձր գագաթը բարձրանալ, դու տղամարդ ես և ոչնչից չես վախենում:

— Ո՛չ, պատասխանեց Բենիամինն, այսպիսի գազաթների վերայ չեն բարձրանում, բայց ես շատ անգամ նորան մօտեցել եմ և ոտս դրել եմ հէնց նորա ստորոտին: Այժմ տարուայ այն եղանակը չէ, որ այդպիսի տեղերում կարելի լինի զբօսնորէլ. այժմ սաստիկ շոգ է և ամէն ըոպէ համարեա սառուցի նոր-նոր կտորներ կարող են պոկուել և գլորուել:

— Արդեօք, չեն կարող դու ինձ տեսել, թէ ինչ բան է այն կարմիրն, որ երբեմն երբեմն երևում է լերան ամենաբարձր գագաթին:

— Մի թէ դու տեսել ես այն կարմիր կէտը: Ինչպէս երևում է լաւ աչքեր ունիս: Այն տեսածդ մի դրօշ է, որ ճանապարհորդներն ահա մի ամիս կը լինի, որ խփել են սառնարանի գլխին, որ իմացնեն ստորոտից անցնողներին, թէ իւրեանք կարողացել են բարձրանալ մինչև այնտեղ, բայց նորանք սաստիկ քամուց օտիպուե-

ցան շուտով հեռանալու այնտեղից, ուստի այնտեղ մի դրօշ թողին: Քամին այդ դրօշը տարաւ սառուցի ամենաբարձր ծալրը, ուր և մնացել է մինչև այժմ և ծածանվում է մինչև որ մի փոթորիկ կը պոկէ նորան և կը տանի իւր հետ մի ուրիշ տեղ կը ձգէ:

Կատարինէն պէտք է բաւականանար Բենիամինի տուած բացատրութեամբ, բայց նորա գլխում տարօրինակ մտքեր սկսան յառաջ գալ, երբ նա տեսաւ հեռուից մօրաքոյր Մարիամին, որ գլուխն և ուսերը ծածկած իւր կարմիր շալով, ջրջում էր սառնարանի ստորոտում: Նա շատ հեռու չէր, ուստի և Կատարինէն իսկոյն ճանաչեց և թէպէտ խեղճ աղջիկն առաւօտն երեք կանգուն թել անգամ չէր մանել, սակայն իսկոյն դիմաւորեց մօրաքրոջը, ձեռքում բռնած կանեփով փաթաթած իլիկը դադարկ ուղղով:

ԺԲ.

Վատարինէն երբ որ բռնորովին մօ-
րաքրոջը մօտեցաւ, այն ժամանակ միայն
խելքը գլուխն եկաւ և տեսաւ, որ ինքը
ցնորում էր, էլ յետ դառնալ անկարելի
էր: Նա մօտեցաւ և մի հաստատ ձայնով
հարցրեց, մի՞թէ չի վախենում սառնա-
րանի վերայ զբօսնելուց:
— Իմ հասակիս, պատասխանեց տի-
րուհի Մարիամը, յոգնելը վայել չէ. մեծ
հաճոյքով քայլում է մարդ: Ոտներն թե-
թեւութեամբ փոփոխելով, բայց ես սառ-
նարանից չեմ վերադառնում, աղջիկս:
Այնտեղ տարուայ այն եղանակին վտան-
գաւոր է: Նա զբօսնում եմ գեղեցիկ լաւ
շաւիղներով, որ մարդ միշտ կը գտնէ եթէ
ճանաչում է լեռները:

— Սիրելի մօրաքոյր, մի՞թէ դուք
չէիք կանգնած այն բարձրում սորանի-

մի ժամ առաջ: Ես տեսայ ձեր կարմիր
ծածկոցը:

— Այնտեղ: Բարձրում, Կատարինէ,
այնտեղ:

— Չգիտեմ, պատասխտեց Կատարի-
նէն շփոթուած, ինձ այնպէս էր թուում,
թէ ձեզ էի տեսնում երկնքում ամպերից
վերև:

— Ո՞վ քեզ ասաց թէ ես կարող եմ
մինչև այն բարձր տեղը վերանալ: Մի՞թէ
դու ինձ վհուկ ես կարծում:

— Ո՛հ, Աստուած իմ, մի՞թէ զարմա-
նալի բան կը լինէր, սիրելի մօրաքոյրս,
եթէ դուք մինչև անգամ վհուկ լինէիք:
Իս երբեք չեմ կամենում ձեզ բարկացնել:
Ասում են թէ բարի և չար վհուկներ կան,
որոնք ասում են պարիկ (la fée) և լինում
են չար ու բարի, դուք անշուշտ բարիներից
պիտի լինիք և գեղջուկները նոյնպէս,
որոնք բարձրանում են այստեղ, և որոնց
լեզուն քիչ-քիչ սկսել եմ հասկանալ, ա-

մենայն իրաւամբ ասում են, որ դուք
սլարիկի նման էք աշխատում:
— Նոյնն ինձ էլ են յաճախ ասում, պա-
տասխանեց տիրուհի Մարիամը, բայց այդ
խօսակցութեան մի ձև է միայն, սակայն
այնուամենայնիւ ես պարիկ չեմ: Ինչպէս
տեսնում եմ քո փոքրիկ ղլուխը լցուած
է ծաղրելի ցնորքներով. բայց ոչինչ,
այդ քո հասակիցդ է, ի հարկէ ես չեի
ցանկանալ տեսնել քեզ այնքան խոհուն, որ
քան ես եմ, որովհետեւ այդ դեռ չափազանց
վաղ է քեզ համար: Սակայն պէտք է մի փո-
քրի խոհեմութիւն ունենալ, իմ սիրելի Կա-
տարինէս: Ես տեսնում եմ, որ դու այսօր
շատ քիչ ես մանել:
— Սւնդ, մօրաքոյր, դուք կարող էք
նաեւ ասել, որ ես բոլորովին իսկ չեմ մա-
նել այս օր:
— Մի լար, որդեակ, դեռ շատ կը
մանես, հարկուոր է միայն ժամանակ եւ
համբերութիւն:

— Ախ, դուք միշտ այսպէս էք աս-
ում, բացականչեց Կատարինէն անհամ-
բերութեամբ, դուք չափազանց համբերող
էք, իմ սիրելի մօրաքոյր, դուք ինձ հետ
վարվում էք ինչպէս մի երեխայի, եւ ինձ
ընդունակ չէք համարում շուտ սովորելու
մի գաղտնիք, սակայն եթէ կամենայիք...
— Լօիւր, ասաց մօրաքոյրը, դու, ինչ-
պէս տեսնում եմ, դժգոհ ես ինձանից,
իբր թէ ես ծածկում եմ քեզանից մի
այնպիսի գաղտնիք, որ պէտք է փոխա-
րինէ կամքի հաստատութեանը եւ տոկոս-
նութեանը: Ես քեզ բացէ ի բաց յայտ-
նում եմ, որ ոչ մի այդպիսի գաղտնիք
չգիտեմ եւ ոչ ոք ինձ մի այդպիսի բան չէ
սովորեցրել: Չիինի՞ դու մոլորուել ես: Դու
մի բան ունիս մտքումդ, որ ես չեմ կա-
րողանում գուշակել, կը կամենամ արդեօք
սիրտդ ինձ բանալ, որ ես կարողանամ
կարդալ թէ նորա մէջ ինչ կայ:
— Այո, կամենում եմ, պատասխանեց

Կատարինէն, մամուսպատմի քարի վերայ
 նստելով տիրուհի Մարիամի հետ: Եւ ձեզ
 բոլորը կը պատմեմ, որովհետեւ մի յան-
 ցանք է ծանրանում իմ խղճիս վերայ և
 կարծեմ թէ այդ է պատճառը իմ փոքր
 ինչ անխելքութեանս: Կատարինէն
 մօրաբրոշը խոստովա-
 նութեամբ իւր հետաքրքրութիւնը և պատ-
 մեց թէ ինչպէս դրան ճեղքից նայել էր
 նորա սենեակը: Եւ նայած ու յայտնեց
 ինչինչ չտեսայ և ոչ մի գաղտ-
 նիք բաց չարի, աւելացրեց նա, դուք խն-
 տեղ չէիք: Եւ այն եթէ այնտեղ չի ներք, ես
 կը տեսնէի ձեզ աշխատելիս և ձեր գաղտ-
 նիքը կ'իմանայի: Եւ ձեռք զո չոյս իմ
 Դու ամենեւին ոչինչ չէիր կարող
 իմանալ, պատասխանեց տիրուհի Մարիա-
 մը, դարձեալ կրկնում եմ, որ ոչ մի գաղտ-
 նիք չունիմ: Եթէ դու ներս մտնէիր իմ
 սենեակը, այնտեղից կարող էիր բարձրա-
 նայ անգուլիքով իմ գործարանս: Այն-

տեղ եմ ես զգում այն, որին այստեղացիք
 ահա են անուանում. որովհետեւ մեր բնա-
 կութեան սենեակները բոլոր գտելու հա-
 մար անյարմար են, վասն զի փոքրիկ
 նրբաթելերը քթի ռունգների մէջ են
 մտնում և այնտեղից գնում ու թոքերի
 վերայ նստում: Ահա, թէ ինչու ես պա-
 րագում եմ տան սամեաբարձր սենեա-
 կում, այնտեղ քամին ազատ շարժում է
 և բրդի մասնիկները տանում է իւր հետ,
 որ վնասակար են քեզ, նոյնպէս և ուրիշ-
 ներին: Բայց դու ինչ բոլորը չասացիր,
 Կատարինէ, թէ ինչու շարունակ ամպերի
 վերայ ես խօսում: Մի գուցէ դու խառ-
 նում ես բերկնային ամպերը իմ մանած
 բարակ ու նուրբ գործուածքի հետ, որ
 մեր երկրում ճարտար մանուկներն ամպ
 են կոչում, նորա անսովոր թեթեւու-
 թիւնը ցոյց տալու համար: Կատարինէն
 սպոյտիկ ամաչեց տես-
 նելով, որ ինքը լիմարութեամբ չէ հա-

կացել մի հասարակ խօսք և որ մի այդպիսի ալլաբանութեան վերայ կառուցել է հազարաւոր ցնորական բաներ: Սակայն մօրաքրոջ այս բոլոր բացատրութիւնները դեռ նորա տեսածը չէր բացատրում, ուստի կամենալով իւր սիրտը հանդարտացնել, սկսաւ պատմել ինչ որ դիտէր իւր վարդապետն ամպի մասին:

Տիրուհի Մարիամն առանց յանդիմանելու և ծաղրելու լսեց նորա բոլոր ասածները:

Փոխանակ եղիսարէթի պէս նորան վիրաւորելու և լռեցնելու, կամեցաւ իմանալ նորա փոքրիկ գլխի մէջ եղած բոլոր ցնորքները, վերջը նա մտածող կերպարանք առաւ և մի քանի բոպէ լռելուց յետոյ ասաց.

— Ես տեսնում եմ, որ դու սիրում ես հրաշալիք, բայց դորանից պէտք է զգուշանալ: Ես ինքս երբ դեռ մանուկ էի, միշտ մտածում էի մի վարդապետն ամպի

մասին. երբ վերջապէս նորահաս աղջիկ էի, հանդիպեցայ նորան: Նա ոսկի շորեր էր հագել և մի մեծ սպիտակ փետուր ունէր . . :

— Ինչ էք ասում, մօրաքոյր: Ձեր ամպը հագնուած էր, նա մի սպիտակ փետուր ունէր գլխին:

— Սյդ միայն խօսքի մի ձև է, կատարինէ, նա մի շատ և շատ փայլուն ամպ էր և ուրիշ ոչինչ: Այդ մի փոփոխական բան էր, այդ մի ցնորք էր միայն: Նա էլ փոթորիկ յարոց և հաւատացնում էր թէ ինքը մեղաւոր չէ, որովհետեւ կայծակը իւր սրտումն է բնակվում: Եւ մի գեղեցիկ օր, այսինքն աւելի լաւ է ասել, մի թշուառ օր, ես էլ քիչ էր մնացել, որ քո ծաղկած խնձորենու նման ջարդ ու փշուր լինէի. բայց դորանով ես ուղղուեցայ ու սկսայ այլ ևս ամպին հաւատ չբնծայել և այնուհետեւ այլ ևս չտեսայ նորան: Մի հաւատար, կատարինէ, անց-

նող ամպերին, նամանաւանդ վարդազոյն
ամպերին: Նոքա լաւ եղանակներ են խոս-
տանում, բայց փոթորիկ են ծնում: Ուրեմն,
աւելացրեց նա, դէհ ան քո իլիկդ և
սկսիր մանել, կամ մի փոքր քնիր: այնու-
հետեւ աւելի լաւ կարող ես մանել: Եր-
բէք վհատիլ և յուսահատուիլ հարկաւոր
չէ, ցնորքները կ'անցնին և աշխատանքը
կը մնայ:

Կատարինէն փորձեց մանել մօրա-
բրոջ հետ խօսակցելով, բայց հեղհետէ
նորա աչքերը փակուեցան և իլիկը ձեռ-
քից վայր ընկաւ:

*Ահա այս գլխիս
հարցարկիւն էր եղանակ
Ժ. Գ.*

Կատարինէն յանկարծ մի հարուած
զգաց, որ նման էր երկրաշարժի. նա
վեր թռչելով նայեց և տեսաւ իւր մօտ
կանգնած մօրաքոյր Մարիամին, որին ա-

ռաջին անգամ սաստիկ բարկացած տեսաւ:
Նորա կարմիր ծածկոցը գլխից ընկել էր
ուսերի վերայ, իսկ արծաթագոյն մազերը
ծածանում էին որպէս ճաճանչ նորա գե-
ղեցիկ և գունատ երեսի վերայ:

— Դու ննջում ես, ծոյլ, ասաց նա
բարկացած, ես քո կամքին թողի, որ ա-
նկս ինչ կամենում ես, իսկ դու քնելն
աւելի լաւ համարեցիր, դու միշտ առանց
մի բան չինելու ցնորում ես շարունակ:
Ոտքի ել և հետեւիր ինձ, ես տեսնում
եմ, որ հարկաւոր է քո առաջ բանալ իմ
գաղտնիքը: Դու այժմ իսկ կ'իմանաս այդ:

Կատարինէն վեր ելաւ և դեռ քնա-
թաթախ մօրաբրոջն հետեց, հազիւ
կարողանալով հասնել նորա յետեից, որով-
հետեւ պառաւը քամուց էլ արագ էր գը-
նում և զարմանալի թեթեւութեամբ բար-
ձրրանալով շափիւղայի և զմրուխտի սան-
դուխների վերայով, վերջապէս նոքա հա-
սան մի հրաշալի անգամանդէ ամրոցի,

ուր քայլում էին սպիտակ ագիտների մորթուց գործած գորգերի վերայ: Բիւրեղի սիւների մէջ տեղով նա շուտով բարձրացաւ այդ հրաշալի շինութեան ամենաբարձր ծալքը:

Ահառասիկ, մենք սառնարանի գազաթին ենք, ասաց մօրաքոյրը մի գարշելի ծիծաղով, այժմ քաջութիւն է հարկաւոր, կարող ես ինձ հետ ամենաբարձր գազաթը բարձրանալ: Բռնիր իմ շորերից, այժմ էլ երկիւղը մի կողմ պէտք է թողնել, վարդադոյն ամպը քեզ է սպասում, որովհետեւ դու նորան խօսք ես տուել:

Կատարինէն բռնեց մօրաքոյրը շրջադդեկտից, բայց սալթաքեց և չկարողացաւ բարձրանալ: Այն ժամանակ մօրաքոյրը ասաց նորան. «Բռնիր այս պարանից և մի վախենար:

Եւ տուաւ նորան մի այնպիսի բարակ թելի ծալք, որ հազիւ կարելի էր

աչքով տեսնել: Սակայն Կատարինէն բռնեց նորա ծալքից, թէ և ամէն րոպէ սալթաքելով բոլոր ուժով ձգում էր թելը, բայց դա չկարուեցաւ երբէք:

Այսպիսով նա բարձրացաւ ամենաբարձր ու սրածալը գազաթը, ուր մօրաքոյրը նորա ձեռքից իրիկը խեց և խըրելով ձեան մէջ, ասաց զարհուրելի ձայնով. «Որովհետեւ դու սորան բանացնել չկարողացար, ուստի ահա քեզ մի յարմար գործիք»:

Եւ տուաւ նորան երկայն և մեծ եղևնու նման մի թաւուտ աւել: Կատարինէն վստահութեամբ ձեռն առաւ աւելը և տեսաւ, որ շատ թեթեւ էր:

— Այժմ, ասաց մօրաքոյրը, պէտք է աւելես:

Եւ լանկարծ մի խիստ հարուած աւելով ձգեց նորան օդային տարածութեան մէջ:

ԺԴ.

Կատարինէն կարծում էր, թէ լերան գագաթից վայր է ընկնում, բայց ալպէս չեղաւ։ Նա օդի մէջ կախուեցաւ այն թելից, որ մօրաքորը կապել էր նորա ձեռքից, որով և կարողանում էր ամպերի վերայով քայլել այնպէս ազատ, ինչպէս մարգագետնի վերայ։

— Դէհ, աւելի՛ր, կանչում էր տիրուհի Մարիամն, այդ բոլոր ամպերն ինձ մօտ հաւաքիր, բոլորն էլ հարկաւոր են ինձ, բոլորն էլ, առանց բացառութեան։

Կատարինէն աւելում էր և աւելում, բայց ոչ երբէք այնքան լաւ և այնքան շուտ-շուտ, ինչպէս որ մօրաքորն էր ցանկանում, որ անդադար գոչում էր. «Աւելի՛ր, աւելի՛ր աւելի՛ լաւ, ահա այստեղը, այնտեղը, աւելի՛ր և կոյտեր կազմիր։ Մի՛թէ քեզ եզներով կառքեր էլ է հար-

կաւոր, որ կարողանաս այդ բոլոր ամպերն այստեղ բերել։

Կատարինէն վազում էր երկնքի վերայով և կոյտեր էր կազմում իւր մեծ աւելով հաւաքած բոլոր ամպերը։ Մի բոպէում նա ամբողջ երկինքը մաքուր աւելեց։

— Այդ կոյտերը բեր ինձ, կանչում էր տիրուհի Մարիամը, հաւաքիր, հաւաքիր ամէն կողմից, այդ բոլորը պէտք է մի կոյտ շինել, որ կարողանամ ձեռքիս մէջ բռնել։

Կատարինէն մղում ու կուտում էր, իսկ տիրուհի Մարիամն հաւաքելով կազմում էր մի վիթխարի դէզ, որ ծածկում էր ամբողջ սառնարանի գագաթը։

Այժմ այստեղ եկ, գօչեց նա, պէտք է ինձ օգնես. բայց դու սպասիր ակնոցներս դնեմ։

Նա դրաւ իւր կեռ քիթն այն արծաթի ակնոցները։

— Ի՞նչ եմ տեսնում, բացականչեց

նա, դու մոռացել ես վարդազուն ամպը: Միթէ կարծում ես, որ ես կը խնայեմք՝ գեղեցիկ բարեկամիդ: Վազիր շուտով նորա յետեւից և մի թողնէր որ փախչի: Վարդազուն ամպը Կատարինէին վազեցրեց շատ երկար ժամանակ և քամուց տարտելով պիտի անյայտանար: Կատարինէն իւրեան օդի մէջ պահող թելը ձգեց նորա վերայ և իսկոյն ամպն ընկաւ նորա գոգնոցը, երգելով քաղցր ու ողբալի ձայնով. «Իմ սիրելի փոքրիկ գոգնոց, դու, որ մի անգամ ինձ ազատել ես, ազատիր և այժմս: Կատարինէ, բարի Կատարինէ, խղճացիր վերաս և մի տար ինձ մանողի ձեռքը: Կատարինէն վերադարձաւ մօրաքրոջ մօտ: Նա գոգնոցը բարձրացրել և կապել էր իւր շուրջը, կարծելով թէ մօրաքոյրն որ շատ զբաղուած էր, այդ բանի վերայ ուշադրութիւն չի դարձնել: Իրաւի մօրաքոյրը շատ զբաղուած էր, դէպք հարթե-

լուց և գգելուց յետոյ, սկսաւ բարակ սանտրը ձեռին ամպը մանել, և այս գործողութիւնը նա այնքան շուտ էր անում, որ մի ըռպէում բոլորը արգէն վերջացած էր: Կատարինէն կուացաւ, որ այդ սպիտակ, աչք խաւրեցնող բամբակից իւր գիրկը ածէ, բայց յանկարծ գոգնոցը պատառուեցաւ և վարդազուն ամպն ընկաւ դէզի վերայ:

— Ահ, խաբեբայ, ասաց մօրաքոյրն, ամպը սանգերքի վերայ ձգելով: Դու կարծում էիր թէ ես նորան չեմ տեսնում: Դէզի մէջ վարդազուն ամպը, դէզի մէջ, ինչպէս և միւսներն են:

Մօրաքոյր, մօրաքոյր, շնորք եմ խնդրում դորա համար, շնորհք իմ փոքրիկ վարդազուն ամպիս. գոչեց Կատարինէն:

— Փաթաթիր այդ ըռքի վերայ, պատասխանեց տիրուհի Մարիամն, ահա, գրգուեցաւ, թել մանիր դորանից, շուտ, շուտ, որովհետեւ ես այդպէս եմ կամենում:

կատարենէն առաւ իւր լոքը և ըս-
կըսաւ աչքերը խփած մանեկ, որպէս զի
չտեսնէ խեղճ ամպի հոգեւորքի ջանքերը:
Նա լսեց մի հանդարտ լացի ձայն, կա-
մենում էր վայր ձգել լոքը և փախչել,
բայց ձեռները փետացան և աչքերը մըթ-
նեցան ու յանկարծ արթնացաւ և տե-
սաւ, որ ինքը քնած էր մամուռապատ քարի
վերայ մօրաբերով մօտ, որ նոյնպէս քը-
նել էր:

Վրէլ Բրազիլ

ԺԵ.

Նա վեր կացաւ և արթնացրեց տի-
րուհի Մարիամին:
— Այսօր մենք երկուսս էլ ծուլա-
ցել ենք: մենք երկուսս էլ քնել ենք, ա-
սաց մօրաբույրը համբուրելով նորան: Ար-
դեօք երազումդ բուն չտեսնար:

— Ախ ալո՛ւ, մօրաբույր, ես տեսայ, որ
այնպէս լաւ էի մանոււմ, ինչպէս և դուք,
բայց աւա՛ղ, իմ մանածը վարդագոյն
ամպս էր:

— Շատ լաւ, որդեակ, զիտացիր ու-
րեմն, որ ես էլ շատ ժամանակ է արդէն,
որ մանեկ եմ իմ ամպս:

«ՎԱՐԴԱՅՈՅՆ ԱՄՊ» Ս

Իմ կ'ամալի որ ու թիւնս, իմ երեւո-
կալ ու թիւնս, իմ վատ բաղդս
էր. ես գոցա փաթածեցի լոքիս և աշ-
խատանքը, գեղեցիկ և ազնիւ աշխա-
տանքը, պատրաստեց այդ թշնամիներից
մի այնպիսի բարակ թել, որի ծանրու-
թիւնը այլ ևս չէի զգում: Հետեւի իմ
օրինակին: Դու չես կարող արգելել ամպե-
րին անցնել քո մօտով, բայց դու պէտք է
քաջասրտութեան պաշար ժողովես: Դու
նոցա կը բռնես, կը զգես, կը մանես
այնպէս լաւ, որ նոքա այլևս չեն կարող

փոթորիկ յարուցանել ոչ քո մէջ և ոչ
քո շուրջը:

Կատարինէն լաւ չհասկացաւ խրատը,
բայց այլ ևս վարդազուն ամպը չտեսաւ:
Երեք ամսից յետոյ, երբ մայրը եկաւ
նորան տեսնելու, Կատարինէն արգէն ա-
ռաջուանից տասնապատիկ լաւ էր մա-
նում, իսկ մի տարի յետոյ, նա այնպէս
ճարտար էր մանում, ինչպէս մօրաքոյր
Մարիամն, որի հարստութեան ժառանգը
էլ ինքն եղաւ:



4585 Զարգացման և Ժողովրդագրության

Հայաստանի Ազգային գրադարան



NL0439024

1790/s